[12] **Մ. Աբեղյան,** *Հայոց գրականության պատմություն,* h. Ա, Ե., 1944, էջ 49. [**M. Abeghyan,** *History of Armenian Literature,* v. I, Yerevan, 1944, p. 49].

[13] **Ա. Այվազյան,** *Լեոյի «Զոկականությունը և նրա անցյալը» բանախոսությունը,* Գրական թերթ, 09.10.2009 [**A. Ayvazyan,** *Leo's lecture* ''*Zokism and its past*''.– newspaper ''Grakan tert'', Yerevan, 09.10.2009].

[14] **Ս. Ումարյան,** *Սյունիքը դիցարան,* Ե,, 1981, էջ 96 [**S. Umaryan,** *Syunik as a pantheon,* Yerevan, 1981, p. 96].

the three towns of Khram, Jughay, and Khorshakunik' on the other side of the river, the entire plain, whose capital is Azhdanakan, as far as the same castle of Nakhchavan. But the aforementioned Queen Anoysh he settled with her sons on the extensive crags of the summit of the great mountain"[15].

This *Tigranakert,* which has no connection with the famous capital of the same name founded in Aghdznik by the Artaxiad Tigran the Great, and is five centuries older than the latter, is also referred to in Armenian historiography as *Tigranavan,* later as *Aparank* or *Aparanner.* The name *Aparanner* is evidently the source of the distorted form *Bananiar,* the name of the Azerbaijani village on the site of the historical city. And Mount *Azhdanakan* is one of the names of *Odzasar* ("serpent mountain") or *Vishapasar* ("dragon mountain") – a symbol of Goghtn and Nakhichevan.

Other theories have also been proposed concerning the name of the Zoks. According to Martiros Kavoukjian, there are links between the region name *Goghtn* and the names of the countries *Wales* and *Gaule,* the tribal names Armenian *Goght'* and Celtic *Celt, Gaul,* perhaps also between the names *Zok* and *Scot*[16]. By the way, Nikolai Marr also noticed the connection between the *Golt* and the *Celt*[17].

There is also another, even more unbelievable theory, according to which the Zoks are said to be of Jewish origin, i.e. they are in fact "Armenian Jews". However, this theory has no scientific basis.

Which of these theories is ultimately supported by this unique and enigmatic dialect?

---

[15] **Մ. Խորենացի,** *Պատմութիւն Հայոց,* Ե., 1981, էջ 98 [**M. Khorenaci,** *History of Armenia,* Yerevan, 1981, p. 98].

[16] **Մ. Գավուքճեան,** *Արմենիա, Սուբարտու եւ Սումեր. Հնդեվրոպական հայրենիքը և Միջագետքը,* Պեյրութ, 1988, էջ 133-151 [**M. Gavukchyan,** *Armenia, Subartu and Sumer. Indo-European Homeland and Mesopotamia,* Beirut, 1988, p. 133-151].

[17] **Н. Марр,** *Армянская культура: ее корни и доисторические связи по данным языкознания,* http://www.iatp.am/culture/articles/marr.html

As is well known, the Iranian language Median has no surviving written attestations (only a limited number of words are known). However, since all the Iranian languages show strong linguistic links, we may attempt to make some comparisons with the characteristics of languages related to Median.

In Agulis dialect, the sound change *a* > *u* does not generally apply. However, it is present in the environment preceding the nasals *n* and *m* (an > *un,* am > *um*) ճանճ čanč (“fly”) > *ճունճ čunǰ,* թանկ t’ank (“expensive”) > *թունկ t’ung',* ծանր canr (“heavy”) > *ծունդր cundər,* փշրանք p’šrank’ (“crumbs”) > *փշրունք p’əšrunk’,* թանձր t’anjr (“thick”) > *թունճդր t’unjər,* նման nman (“similar”) > *նմունմ nəmun,* քսան k’san (“twenty”) > *քսուսունմ k’əssun,* Զոկստան Zokstan (“country of zoks”) > *Զոկստունմ Zokstun,* as well as ծամ cam (“spit”) > *ծունմ cum,* համ ham (“taste”) > *հունմ hum,* շամամ šamam (“round melon”) > *շամունմ šamum,* շամբ šamb (“quagmire”) > *շումբ šumb,* Ռամիս *Ramis* > *Ռումիս Rumis* etc. This phenomenon is also found, for example, in the Tehran dialect of Modern Persian: باران bārān (“rain”) > *bārun,* زبان zabān (“tongue”) > *zabun,* خانه xāne (“house”) > *xune,* آن ān (“that”) > *un,* نان nān (“bread”) > *nun,* آسمان ās(e)mān (“sky”) > *ās(e)mun,* خیابان xiyābān (“street”) > *xiyābun,* ایران Irān > *Irun,* تحران Tehrān > *Tehrun,* as well as حمام hammām (“baths”) > *hammum*, تمام tamām (“whole, completely”) > *tamum,* بام bām (“roof”) > *bum,* بادام bādām (“almond”) > *bādum* etc.

In Agulis dialect, Classical Armenian *u* changes to *o* in monosyllabic words (*u* > *o*): թուր t’ut’ (“mulberry”) > *թոր t’ot’,* ծուռ cur (“crooked”) > *ծոռ cor,* թուղթ t’ułt’ (“paper”) > *թոխթ t’oxt’,* թուխս t’uxs (“mother hen”) > *թոխս t’oxs,* մուկն mukn (“mouse”) > *մոկնը moknə,* նուռն nurn (“pomegranate”) > *նռոնը nornə,* թուզ t’uz (“fig”) > *թոզնը t’oznə* etc. This phenomenon, although it is also found in the Armenian dialect of Artsakh and Syunik’, is very common in Iranian languages. For example, Classical Persian and Tajik *u* corresponds to Modern Persian and Dari *o,* Classical Persian and Tajik *tu* (‘’you’’) corresponds to Dari *tů/to,* and

Modern Persian *to,* in the same way we find the form *toxm* for *tuxm* ("seed"), for Classical Persian *ustuvār* (**"**strong, steady, standing") and Tajik *ustuvor* we find Dari *ostowår* and Modern Persian *ostovār,* for Classical Persian *Siyāvuš* and Tajik *Siyôvuš* Modern Persian has the form *Siyāvoš* etc.[18]

Agulis dialect also shows the sound change *o* > *u:* ծnպ cop ("fringe") > *ծnւպ cup,* ծng coc' ("sinus") > *ծnւg cuc',* նարnun narot ("braid") > *նարnւտ narut,* hnդ hoł ("earth") > *hnւդ huł,* խunn xot ("grass") > *խunւտ xut,* խunq xoz ("pig") > *խunւq xuz,* խunդ xor ("deep") > *խunւդ xur,* խnրթ xort' ("non-native") > *խunւnթ xurt'* etc. This phenomenon, too, is also found in the Iranian languages. For example, in place of Classical Persian *o,* Dari, Tajik, and Modern Persian all show the vowel *u:* for Classical Persian *rōz* ("day") we find the Tajik form *růz,* Modern Persian *ruz,* Classical Persian *gōš* ("ear") corresponds to Dari and Tajik *gůš,* Modern Persian *guš,* Classical Persian *bōy* ("smell, perfume") corresponds to Dari *bůy,* Tajik *bů(y),* Modern Persian *bu(y)* etc. [19]

In Agulis dialect we also find the sound change *a* > *o:* պլ(բ) al(k') ("evil spirit") > *oլ ol,* պկն akn ("eye") > *oկբն okən,* պրջ arǰ ("bear") > *onջ oŕǰ,* պջ aǰ ("right") > *յoջ//jöջ yoǰ//jöǰ,* բuh bah ("shovel") > *բoհ boh,* գարի gari ("barley") > *գöդի göri,* դառն darn ("bitter") > *դonնը//dönնը doŕnə//döŕnə,* ծափ cap' ("clapping") > *ծoփ cop',* կարճ karč ("short") > *կonճ koŕč,* հազար hazar ("thousand") > *hբqqöր həzzör,* մարդ mard ("human") > *մonդ moŕd,* տաշտ tašt ("tub") > *տoշտ tošt,* քար k'ar ("stone") > *քor k'or,* պսակ psak ("wreath") > *փբuoկ p'əsok,* շարք šark ("row") > *շorք šork',* ծրար crar ("envelope") > *ծբroր cəror,* վարդ vard ("rose") > *վönդ vörd,* տալ tal ("to give") > *տoլ tol* etc. This may be

[18] *Основы иранского языкознания: новоиранские языки,* Москва, 1982, p. 38-44.
[19] There.

compared with the fact that Classical Persian *a* corresponds to rounded *å* in Modern Persian and Dari, and *o* in Tajik and Ossetian.

In word-final position, following a vowel or *n*, the consonants *g, k,* and *k'* are palatalized in Agulis dialect (q, ɣ, ɢ g, k, k' > *qʲ, ɣʲ, ɢʲ gʲ, kʲ, kʲ'*): ǎիq jig (“tight”) > *ǎիqʲ jigʲ,* nւրաq urag (“adze”) > *oրաqʲ oragʲ,* պա-տարաq patarag (“mass”) > *պատարաqʲ patarag,* ծաղիկ całik (“flower”) > *ծաղիկʲ całikʲ,* կǎիկ kcik (“clew”) > *կɢǎայկʲ kəcaykʲ,* կնիկ knik (“woman”) > *կɢնայկʲ kənaykʲ,* երեք erek’ (“three”) > *իրիքʲ irikʲ'',* թի-թեռնիկ titernik (“butterfly”) > *թɢթեռնուիկʲ tətărnükʲ,* հարսանիք harsanik’ (“wedding”) > *հɢռսանիքʲ hərsanikʲ''* etc. This phenomenon, although it is also found in the Armenian dialects of Van, Shatakh, Khoy, and other neighbouring areas, is nonetheless extremely characteristic of Persian: پلنگ *palangˊ* (‘’panther ’’), تک *takˊ* (‘’single’’), بادبادک *bādbādakˊ* (‘’hot air balloon, kite’’), سنگ *sangˊ* (‘’stone’’), جاک *xākˊ* (‘’soil’’), رنگ *rangˊ* (‘’colour, tint’’), چنگ *čangˊ* (‘’claw’’), تاک *takˊ* (‘’vine’’), چروک *čorukˊ* (‘’wrinkle’’), سوگ *sugˊ* (‘’mourn’’), خوک *xukˊ* (‘’pig’’), دوگ *dugˊ* (‘’spindle’’), برگ *bargˊ* (‘’leaf’’) etc.

In Agulis dialect, the fronted form of the vowel *ä* is very close to its Persian equivalent *a.* This vowel is often found in loan words: *դüռվüզü därväzä* (‘’gate’’), *շüքʲüռդüն šäkʲ'ärdän* (‘’sugar bowl’’), *մüխմüռ mäxmär* (‘’velvet’’), *մühրüմü mährämä* (‘’towel’’), *նüռդիվուն närdivun* (‘’step, stair’’), *նüֆüu näfäs* (‘’breath’’), *ջüռզ järg* (‘’order’’), *uüբüբ säbäb* (‘’cause, reason’’), *uüբñիր säbür* (‘’patience’’), *փühիվան pʲählivan* (‘’tightrope walker’’) etc., as well as in inherited words: *üռñիր älür* (‘’flour’’), *ümbրüվ ämbräv* (‘’date’’), *üռկñi ärkü* (‘’two’’), *բüռüվ bäräv* (‘’hello’’), *բüռüն bärän* (‘’mouth’’), *qüվիկ gävil* (‘’to praise’’), *qʲüռիկ*

g'äril (''to sew''), *hñiշüփ hüšäp'* (''dragon''), *Զüտիվ Zätik'* (''Easter''), *Էիշüր excär* (''sheep''), *թüփñiո täp'ür* (''feather''), *ժüնգ žäng* (''rust''), *խüփիվ xäpil* (''to trick''), *շüփüթə šäp'ät'* (''week/ Saturday''), *կ'üպñiuո k'äpüt* (''blue''), *hüջիվ häjil* (''to bark''), *բղüնիք bəläник''* (''key'') etc.

Agulis dialect also shows phenomena involving diphthongization of Classical Armenian simple vowels. In particular, the vowel *i* changes to the diphthong *ay:* ինն inn ("nine") > *այնը aynə,* սիրել sirel ("to love") > *սայրիվ sayril,* սիսեռն siseŕn "(pea") > *սայսüռնը saysäŕnə,* սպիտակ spitak ("white") > *սպայտակ spaytak,* քիթ k'it' ("nose") > *քայնթ k'aynt',* առնետ arnet ("rat") > *բռնայո ərnayt,* միս mis ("meat") > *մայս mays,* ծիծ cic ("breast") > *ծայծ cayc,* ծիծաղ cicał ("laugh") > *ծայծաղ caycał* etc. Similar phenomena are also found in Iranian languages, for example, Pahlavi *nēzak* ("spear") which became in modern Persian *neyze*, *nēl* ("gall") > *neyl,* Persian mive ("fruit") corresponds to *meyva* in Tajik, the Hebrew month name *Nisān* becomes *Neysān* in Persian[20].

It is also interesting that in Agulis dialect many Iranian loans have preserved forms familiar from the source language: *նüրդիվուն närdivun* ("step, stair"), *ջուն jun* ("soul"), *բoqար bozar* ("market"), *թoqա t'oza* ("fresh"), *քüհրիբoր k''ähribor* ("amber»), *շüռբoq šärboz* ("slanderer"), *քüնդրռբoq k''ändrboz* ("tightrope walker"), *շանդուն šandun* ("candlestick»), *ակուշ akuš* ("scraper") etc. A number of words of unknown etymology can obviously be derived from Iranian languages, e.g. the word *Խրոդուշ Xədoduš* ("mythical being that falls on sleeping people at night and weighs them down»)[21] can be compared with Persian خدا *Xoda* ("God")

[20] There.

[21] **Մ. Զաքարյան,** *Ագուլիսի բարբառը,* Ե,, 2008, էջ 142 [**M. Zakaryan,** *Agulis Dialect,* Yerevan, 2008, p. 142].

and دوش *duš* (“shoulder”). There are some words that entered the dialect at an earlier date, and have been affected by sound changes active in the dialect at the time, such as *խօյա* (“paternal aunt”), a Persian loan that should appear as Persian خالا *խալա xala* («maternal aunt), however, it is subject to the sound change *ա* > *օյ* (as seen in ազի azi (“mother”) > *օյզի oyzi,* ճրագ črag (“lampada”) > *ճըրօյգ čəroyg* etc.). Acharyan interprets these words as loans from an earlier period[22].

There is another striking and important fact. The personal name *Զահակ (Զոհակ) Zahak (Zohak)* has not been preserved in Agulis dialect, but the sound changes operating in the dialect could have given the form *Zəhok Զըհօկ,* as can be seen from similar examples: հազար hazar (“thousand”) > *հըզգօր həzzör,* դժուար džuar (“difficult”) > *դըժօր dəžör,* դողալ dołal (“to tremble”) > *դըղղօլ dəłłol,* երևալ ereval (“to appear”) > *ըրվօլ ərvöl,* կրակ krak (“fire”) > *կ՛ըրօկ//գ՛ըրօկ k'ərok//g'ərok,* բուրվառ burvar (“censer”) > *փըրվօռ p'ərvoṙ,* մախաթ maxat (“awl”) > *մըխօթ məxot* etc.

Conclusion

Comparing all the above-mentioned proposals regarding the etymology of the name *Zok,* based particularly on the evidence given by the father of Armenian history Movses Khorenatsi, the opinion of the well-known Armenologist Manuk Abeghyan, study of the available dialect material, and the obvious evidence of ancient contacts with Iranian languages, we may consider most convincing the theory that it is derived from the name *Azhdahak-Zohak.* This undoubtedly shows that this group of Armenians had some ancient connection with the Medes which had remained in the folk memory, something which is confirmed by both the Father of history and the great Armenologist.

---

[22] **Հ. Աճառեան,** *Քննութիւն Սգուլիսի բարբառի,* Ե., 1935, էջ 27-28 [**H. Acharyan,** *Research of the Agulis dialect,* Yerevan, 1935, p. 27-28].

References

Martirosyan H., The Armenian dialects: Archaisms and innovations; description of individual dialects.– Bulletin of Armenian Studies / Армянский гуманитарный вестник, Moscow-Yerevan, v. 5, 2019.

Vardanyan A., Dialectologic Map of Nakhijevan.– Apaga (International Journal of Armenian and Iranian Studies), n. 19, Tehran, 2004.

Марр Н., Армянская культура: ее корни и доисторические связи по данным языкознания, http://www.iatp.am/culture/articles/marr.html

Марр Н., Термин ‘’скиф’’. Избранные работы, т. 5, Москва-Ленинград, 1935.

Основы иранского языкознания: новоиранские языки, Москва, 1982.

Патканов К., Исследование о диалектах армянского языка. Филологический опыт, Санкт-Петербург, 1869.

Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Երևան, 1968. / Abeghyan M., Works, v. III, Yerevan, 1968.

Աբեղյան Մ., Հայոց գրականության պատմություն, հ. Ա, Երևան, 1944. / Abeghyan M., History of Armenian Literature, v. I, Yerevan, 1944.

Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935. / Acharyan H., Research of the Agulis dialect, Yerevan, 1935.

Այվազյան Ա., Ագուլիս, Երևան, 1984. / Ayvazyan A., Agulis, Yerevan, 1984.

Այվազյան Ա., Լեոյի «Զոկականությունը և նրա անցյալը» բանախոսությունը, Գրական թերթ, 09.10.2009. / Ayvazyan A., Leo's lecture ‘’Zokism and its past’’.– newspaper ‘’Grakan tert’’, Yerevan, 09.10.2009.

Գավուքճեան Մ., Արմենիա, Սուբարտու եւ Սումեր. Հնդեվրոպական հայրենիքը և Միջագետքը, Պեյրութ, 1988. / Gavukchyan M., Arme

nia, Subartu and Sumer. Indo-European Homeland and Mesopotamia, Beirut, 1988.

Զաքարյան Մ., Ագուլիսի բարբառը, Երևան, 2008. / Zakaryan M., Agulis Dialect, Yerevan, 2008.

Թումանաց Հ., Միր հրգ֊ղառձ վ֊թ֊նը.– Հ. Աճառեան, Քննութիւն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935. / Tumanats H., - Revived Before Death our Homeland.- H. Acharyan, Research of the Agulis dialect, Yerevan, 1935.

Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806. / Inchichyan Gh., The Geography of the Four Parts of the World, v. I, Venezia, 1806.

Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց, Երևան, 1981. / Khorenaci M., History of Armenia, Yerevan, 1981.

Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937. / Gharibyan A., An Introduction to the Study of the History of the Armenian Language, Yerevan, 1937.

Սարգսեանց Ս., Ագուլեցոց բարբառը (զօկերի լեզուն), Մոսկուա, 1983. / Sargsyanc S., The Agulis Dialect (Zok Language), Moscow, 1983.

Սողոմոնենց Ս., Ըգուլեաց անումը.– «Զօկի ճրոյգը» թերթ, թիվ 1, Թիֆլիս, 1919. / Soghomonents S., The Name of Agulisians.– newspaper "Zoki chroyge", n. 1, Tiflis, 1919.

Վարդանեան Ա., Նախիջեւանի բարբառային քարտէզը, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 2000, թիվ 1-12. / Vardanyan A., Dialectologic Map of Nakhijevan, Handes Amsorya, Vienna, 2000, n. 1-12

Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երևան, 1981. / Umaryan S., Syunik as a pantheon, Yerevan, 1981.

Artak Vardanyan, PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Բանալի բառեր. Գողթն գավառ, Ագուլիսի բարբառ, մարեր, Աժդահակ, Զոհակ, պարսկերեն, իրանական լեզուներ:

Վարդանյան Արտակ -Հայ-իրանական լեզվական առնչությունները Ագուլիսի բարբառում և հայկական «զոկ» ցեղանվան ստուգաբանությունը.- Աշխատանքը վերաբերում է Ագուլիսի բարբառում առկա հայ-իրանական լեզվական առնչություններին և հայկական *զոկ* ցեղանվան ստուգաբանությանը:

Զոկ ցեղանվան ստուգաբանությամբ զբաղվել են հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողներ:

Նիկողայոս Մառը և Արարատ Ղարիբյանը այս ցեղանունը բխեցրել են սկյութների *սակ* ցեղանունից: Քերովբե Պատկանյանը, Սարգիս Սարգսյանցը և Արգամ Այվազյանը համարել են, որ ցեղանունն ընդամենը մականուն է՝ առաջացած բարբառում կիրառվող *հոկ (ոկ), դոկ, նոկ* («այս», «այդ», «այն») ցուցական դերանունների՝ *զ* նախդիրի հետ կիրառվող *զհոկ, զդոկ, զնոկ ձևերից:*

Ըստ Մանուկ Աբեղյանի՝ *զոկ* ցեղանունը առաջացել է մարերի առասպելական արքա *Աժդահակի* անվան *Զոհակ* ձևից: Այս վարկածը պաշտպանել են Լեոն և Սերգեյ Ուսմաոյանը: Ագուլիսի բարբառի ընձեռած նյութը, մասնավորապես՝ առնչությունները իրանական լեզուների և բարբառների հետ, ինչպես նաև պատմահայր Մովսես Խորենացու վկայությունը թույլ են տալիս առավել հավանական համարել այս վարկածը:

Արտակ Վարդանյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ավագ գիտաշխատող:

Ключевые слова: провинция Гохтн, Агулисский диалект, мидийцы, Аждahак, Зohак, персидский язык, иранские языки.

Варданян Артак- Армяно-иранские языковые корреляции в агулисском диалекте и этимология названия армянской этнической группы "зок".– Работа посвящена армяно-иранским языковым связям в Агулисском диалекте и этимологии названия армянской этнической группы **зок**.

Этимологией этнонима **зок** носителей агулисского диалекта армянского языка занимались многие исследователи.

Николай Марр и Арарат Гарибян выводили этот этноним из этнонима **сак** скифов. Керовбе Патканян, Саргис Саргсянц и Аргам Айвазян считали, что этноним **зок** всего лишь прозвище, образованное от местоимений **hок, док, нок** (“это”, “этот”, “тот”), применяемых в диалекте с определенным артиклем **з** – **зhок, здок, знок**.

Согласно Мануку Абегяну, этноним **зок** произошел от формы **Зohак** имени мифического мидийского царя **Аждahака**. Эту версию защищали Лео и Сергей Умарян. Материал, предоставленный Агулисским диалектом, а также свидетельство отца армянской истории Мовсеса Хоренаци, позволяют предположить, что эту версию можно считать наиболее вероятной.

Артак Варданян, к. ф. н., старший научный сотрудник Института языка имени Р. Ачаряна НАН РА.

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ*

DOI: 10.54412/2738277X-2023.2.20-65

Վարդանյան Արտակ
բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
ավագ գիտաշխատող. artva@list.ru

Բանալի բառեր. Նախիջևանի տարածք, Այրարատ, Սյունիք, Վասպուրական, բարբառ, միջբարբառ, խոսվածք:

Նախաբան

Պատմական Հայաստանի նշանավոր հատվածներից մեկի՝ Նախիջևանի տարածքը, ընդգրկելով Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի՝ Շարուր, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ գավառների պատմական սահմանները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

1605 թվականին Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայանալուց, մի քանի տասնամյակ անց աստիճանաբար հայերի կողմից մասամբ վերաբնակեցվելուց, ապա

* Իբրև զեկուցում ընթերցվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» 10-րդ միջազգային գիտաժողովում (Գյումրի, 2019, սեպտեմբերի 27-29):

Ներկայացվել է 03. 10. 2023, գրախոսվել՝ 6.11.2023:

1828 թվականին Արևելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո հայերի թիվը այս երկրամասում կրկին գերակշիռ է դարձել[1]:

1918-1920թթ. իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ կամ մասամբ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Անցյալ դարասկզբի Նախիջևանի հայ բնակչության վերաբերյալ առկա վիճակագրական-տեղագրական ուսումնասիրությունների, մասնավորապես՝ պատմաբան և վիճակագիր Ա-Դո-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.)» հայտնի աշխատանքի[2] ընձեռած տվյալների և տարածքում առկա խոսվածքների վերաբերյալ երկար տարիների մեր հավաքչական աշխատանքների հիման վրա կազմել ենք Նախիջևանի գավառների հայ բնակչություն ունեցող բնակավայրերի բարբառների համապատկերը:

Դիտարկումներ

1918 թվականի վիճակով Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի և Մարաղայի բարբառներով: Ըստ որում, *Խոյի բարբառով* խոսում էր 33 բնակավայր՝ Շարուր գավառի Նորաշեն քաղաքը, Ալաքլու, Դաշարխ, Թազագյուղ, Խանլուխլար, Վարմազյար,

---

[1] **Ա. Այվազյան,** *Նախիջևան. գիրք հուշարձանաց,* Ե., 1990, էջ 5-29:

[2] **Ա-Դո (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան)**, *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.,). փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով,* Ե., 1907, էջ 64-67:

Քեշտազ գյուղերը, Ճահուկ գավառի Շահապոնք քաղաքը, Ճահուկ ավանը, Առինջ, Բաբոնք, Գյոմուր, Խալխալ, Կժաձոր, Նորս, Նորս-Մազրա գյուղերը, Երնջակ գավառի Արազին և Կզնութ գյուղերը, Նախճավան գավառի Ալագյոզ-Մազրա, Դիդուվար, Եմխանա, Խալիլու, Կարախանբեկլու, Կուլիբեկ Դիզա, Երնջակ (Յարմջա), Հաջիվար, Մամարզա Դիզա, Մոխրաբլուր (Քյուլթափա), Նազարապատ, Շմրթան, Վերին Ըզնոբա, Տամբատ (Թմբուլ) և Քյարիմբեկ Դիզա գյուղերը, իսկ *Մարաղայի բարբառով*՝ 3 բնակավայր՝ Գողթն գավառի Վերին Ազա, Ներքին Ազա և Դեր գյուղերը:

Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ զանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ. *Ագուլիսի բարբառով* խոսում էր 7 բնակավայր՝ Գողթն գավառի Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Ցղնա, Տանակերտ, Քաղաքիկ, Հանդամեջ և Դիսար գյուղերը, *Ջուղայի բարբառով*՝ 1 բնակավայր՝ Երնջակ գավառի Ջուղա գյուղը, *Արարատյան բարբառով*՝ 4 բնակավայր՝ Նախճավան գավառի Նախիջևան քաղաքը և Այլապատ, Աստապատ և Կարմիր վանք գյուղերը, *Ճահուկ-Վայքի միջբարբառով*՝ 2 բնակավայր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծոփ (Բադամլու) գյուղերը, *Արցախ-Սյունիքի բարբառով*՝ 6 բնակավայր՝ Երնջակ գավառի Աբրակունիս, Գյաղ, Նորաշեն, Շահկերտ, Շոռոթ և Փորադաշտ (Փարադաշտ) գյուղերը, *Հյուսիսային Գողթնի միջբարբառով*՝ 6 բնակավայր՝ Գողթն գավառի Ռամիս, Փառակա, Մեսրոպավան, Բիստ, Ողոհի (Ալահի) և Խուրստ գյուղերը: Բնակչության ներքին

տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի և Խոյի), Որդուարի (Ագուլիսի և Խոյի)[3]:

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանում առկա էին հայերենի բարբառների «ում» և «լիս» ճյուղերի բարբառներ, ըստ որում՝ «լիս» ճյուղին պատկանում էին Խոյի և Մարաղայի բարբառները, իսկ տեղաբնիկ բարբառները պատկանում էին «ում» ճյուղին: Տարածքում առկա էին ինչպես երկաստիճան ձայնեղազուրկ, այնպես էլ եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգերով բարբառներ, ըստ որում՝ քառաստիճան համակարգ ուներ միայն Ջուղայի բարբառը, որում առկա էին ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր և շնչեղ ձայնեղներ, եռաստիճան՝ Արարատյան և Ագուլիսի բարբառները (ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր), թեև Ագուլիսի բարբառ համարվող Ցղնայի ենթաբարբառը վերոհիշյալ մյուս բարբառների (Արցախի-Սյունիքի, Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի, Խոյի և Մարաղայի) նման ուներ բաղաձայնների երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ (խուլեր և շնչեղ խուլեր):

Ըստ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ տարածքի բարբառները պատկանում էին հայերենի բարբառների արևելյան խմբակցության արևելյան կամ Ագուլիս-Մեղրու (Ագուլիսի, Հյուսիսային Գողթնի), հարավարևելյան կամ Խոյ-Մարաղայի (Խոյի, Մարաղայի), հյուսիսարևելյան կամ Արարատյան (Արարատյան) և ծայրհյուսիսարևելյան կամ Արցախ-Շամախու (Սյունիք-Արցախի) բարբառախմբերին:

[3] **Ա. Վարդանեան,** *Նախիջեւանի բարբառային քարտէզը*, Հանդէս ամսօրեայ, հ. 1-12, Վիեննա**,** 2000, էջ 457-470:

Բարբառային այս բազմազանության մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող՝ Ագուլիսի բարբառը կամ զոկերենը, որի առաջին տպավորությամբ խիստ անհասկանալի լինելը հետևանք է ձայնավորների կրած գրեթե անճանաչելի փոփոխությունների, պարզ ձայնավորների դիմաց երկբարբառների առկայության, բայի խոնարհման առանձնահատկությունների և այլն: Ագուլիսի բարբառը վերջնականապես մարեց 1989 թվականին, երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի Ցղնա գյուղից արտաքսվեցին բարբառի վերջին կրողները:

Այդուհանդերձ, Ագուլիսի բարբառը հայերենի ամենավաղ և մանրամասն ուսումնասիրված բարբառներից է, որի մասին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբանների կողմից հոդվածներ և ուսումնասիրություններ են հրապարակվել դեռևս 19-րդ դարի կեսերից (Հայնրիխ Պետերման (1866՝ գերմաներեն), Քերովբե Պատկանյան (1868՝ գերմաներեն, 1869՝ ռուսերեն), սակայն երկու հիմնարար աշխատանքներ՝ Սարգիս Սարգսյանցի «Ագուլեցոց բարբառը (զոկերի լեզուն)» (Մոսկվա, 1883) և Հրաչյա Աճառյանի «Քննութիւն Ագուլիսի բարբառի» (Երևան, 1935) մենագրությունները սպառիչ ուսումնասիրություններ են այս բարբառի հետազոտման ուղղությամբ: Ուշագրավ է նաև Մարի Զաքարյանի՝ համեմատաբար վերջերս հրապարակած «Ագուլիսի բարբառը» մենագրություն-բառարանը (Երևան, 2008), որը լրացնում է նախորդ աշխատանքները՝ բառապաշարի առավել մանրակրկիտ ներկայացման առումով:

Դասական բարբառագիտության երախտավորները ժամանակին ուսումնասիրել են նաև Արարատյան, Ջուղայի, Արցախ-Սյունիքի, Խոյի, Մարաղայի բարբառները: Ընդ որում, Ջուղայի և Մարա

ղայի բարբառները կրկին ուսումնասիրել է հայ լեզվաբանության, մասնավորապես՝ բարբառագիտության մեծ երախտավոր Հրաչյա Աճառյանը իր «Քննութիւն Նոր Ջուղայի բարբառի» (Երևան, 1940) և «Քննութիւն Մարաղայի բարբառի» (Երևան, 1926) աշխատանքներում: Արցախ-Սյունիքի բարբառին Հրաչյա Աճառյանը անդրադարձել է «Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան» ժողովածուի Գ հատորի «Քննութիւն Ղարաբաղի բարբառին» աշխատանքում (Վաղարշապատ, 1899): «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» մենագրությամբ բարբառն ուսումնասիրել է Կարո Դավթյանը (Երևան, 1966), «Գորիսի բարբառը» մենագրությամբ՝ Ալեքսանդր Մարգարյանը (Երևան, 1975), «Ղարաբաղի բարբառի բառարան» մենագրություն-բառարանով՝ Արմեն Սարգսյանը (Երևան, 2013): Հայ բարբառագիտության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում (Արարատ Ղարիբյան, Ահարոն Գրիգորյան, Սիրանուշ Բաղդասարյան-Թափալցյան և այլք) մեծ տեղ են գրավում Արարատյան բարբառին նվիրված բաժինները: Դասական բարբառագիտության մեջ Աստապատի բարբառը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ:

Նախքան շահաբբասյան բռնագաղթը Արարատյան բարբառը տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել՝ Արարատյան դաշտը և Արաքսի հովիտը ներառյալ, ինչի ապացույցներից է նաև Նախիջևանի տարածքում պահպանված հիշյալ չորս բնակավայրերի, ինչպես նաև Արաքսի իրանյան ափում գտնվող Դարաշամբ գյուղի խոսվածքները: Ի դեպ, Նախիջևանի տարածքին մերձակա Արարատի մարզում նույնպես պահպանվել են տեղաբնիկ՝ Արարատյան բարբառի խոսվածքներ (Արարատ, Այգավան գյուղեր):

Համեմատաբար «նորահայտ» բարբառ է Ճահուկ-Վայքի միջբարբառը (Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր, հյուսիսային Նախիջևանի՝ այժմ արդեն հայաթափ երկու բնակավայրեր՝ Նախիջևան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծոփ գյուղերը): Մինչև 1980-ական թվականները այս միջբարբառի մասին սոսկ թռուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ. այն համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք: Մեր հեղինակած մի շարք աշխատանքներով և մենագրությամբ (Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Երևան., 2004) պարզել ենք, որ Ճահուկ-Վայքի միջբարբառը Արարատյան բարբառի խոսվածք չէ, այլ իր հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան, Ջուղայի և Արցախ-Սյունիքի բարբառների միջև: Աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման այս փաստն էլ հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Շահաբբասյան բռնագաղթից առաջ այս բարբառն էլ տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են Երևանի մերձակայքում գտնվող *Չոլմակչի* գյուղում 1679 թվականի երկրաշարժից հետո Ճահուկ գավառի Նորս գյուղից վերաբնակված և բնակավայրը *Նորք* վերանվանած հայերի խոսվածքի՝ հնչյունաբանական, բառապաշարային և ձևաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրությունները Հյուսիսային Նախիջևանի և Ճահուկ գավառի տեղաբնիկ խոսվածքների հետ[4], ինչպես նաև նույն տարածքի Ղարաղուշ գյուղից և Ճահուկ ավանից 17-18-րդ

[4] **Ա. Վարդանյան**, Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները - *«Հայերենագիտության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու,* Ե., 2018, էջ 92-98:

դարերում Թուքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքների հետ[5]: Հենց այս նկատառումով, նախկինում *Վայոց ձորի միջբարբառ* անվանված եզրույթը հետագայում վերանվանել ենք *Ճահուկ-Վայքի միջբարբառ:*

Մեր կողմից ուսումնասիրվել է նաև Հյուսիսային Գողթնի Ռամիս, Փառակա, Բիստ, Մեսրոպավան, Ողոհի, Խուրստ գյուղերի՝ լեզվական բավական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքախումբը, որը Գևորգ Ջահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների կիրառմամբ պարզել ենք, որ միջակա դիրք ունի Ագուլիսի, Արցախ-Սյունիքի և Մեղրու բարբառների միջև, ուստի անվանել ենք *Հյուսիսային Գողթնի միջբարբառ* (Երևան, 2021):

Թուրք-բոլշևիկյան խարդավանքով Ադրբեջանին բռնակցվելուց և Հայաստանի սրտում այսպես կոչված Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կազմավորումից հետո՝ 1924 թվականին հայ բնակչության թիվը չգերազանցեց 20 տոկոսը, քանի որ պետական մակարդակով խոչընդոտվեց տարածքից գաղթած հայության՝ հայրենի եզերք վերադարձը[6]: Ողջ խորհրդային շրջանում այդ հանրապետության դրսևորած հետևողական հակահայ քաղաքականության հետևանքով հայերի թիվը գնալով ավելի նվազեց և 1988 թվականին՝ Նախիջևանի վերջնական հայաթափման նախօրյակին կազմում էր տարածքի ընդհանուր բնակչության ընդամենը 1,5-2 տոկոսը:

---

[5] **V. Samuelian,** Le dialecte des Armɲniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours - *Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր,* Ստեփանակերտ, 2001, էջ 2:

[6] **А. Варданян,** Изгнание коренного армянского населения из Нахиджевана - *Зов вишапасара: статьи, эссе, рассказы,* Е., 2010, стр. 51-56.

Խորհրդային Ադրբեջանի կողմից անցյալ դարում իրականացված հայատյաց քաղաքականության հետևանքով ոչ միայն իսպառ հայաթափվեց ողջ երկրամասը, ոչ միայն ամբողջովին ոչնչացվեցին տարածքի հայ մշակույթի բազմահազար հուշարձանները, այլև իրենց իսկ բնօրրանից արմատախիլ լինելով՝ ոչնչացան հայերենի ամբողջ խումբ բարբառներ:

Եզրակացություն

Այսպիսով՝ պատմական Հայաստանի Վասպուրական, Այրարատ և Սյունիք աշխարհների նշանավոր խաչմերուկ Նախիջևանի տարածքը, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

1918-1920թթ. իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Բնակչության գերակշիռ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի բարբառով (33 բնակավայր), ինչպես նաև Մարաղայի բարբառով (3 բնակավայր): Պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ՝ Ագուլիսի բարբառը (7 բնակավայր), Ջուղայի բարբառը (1 բնակավայր), Արարատյան բարբառը (4 բնակավայր), Ճահուկ-Վայքի միջբարբառը (2 բնակավայր), Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքները (7 բնակավայր), Հյուսիսային Գողթնի խոսվածքները (6 բնակավայր):

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանի բարբառները պատկանում են հայերենի բարբառների «ում» և «լիս» ճյուղերին՝ երկաստիճան, եռաստիճան և

քառաստիճան բաղաձայնական համակարգերով, իսկ ըստ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ պատկանում են հայերենի բարբառների արևելյան խմբակցության արևելյան (Ագուլիս-Մեղրու), հարավարևելյան (Խոյ-Մարաղայի), հյուսիսարևելյան (Արարատյան) և ծայրհյուսիսարևելյան (Արցախ-Շամախու) բարբառախմբերին:

Բարբառային այս բազմազանության մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող՝ Ագուլիսի բարբառը (զոկերենը), որը վերջնականապես մարեց 1989 թվականին, երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի Ցղնա գյուղից արտաքսվեցին բարբառի վերջին կրողները:

Օգտագործված գրականություն

Ա-Դո (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.,). փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով, Ե., 1907:
Այվազյան Ա., Նախիջևան. գիրք հուշարձանաց, Ե., 1990:
Վարդանեան Ա., Նախիջեւանի բարբառային քարտէզը, Հանդէս ամսօրեայ, հ. 1-12, 2000, Վիեննա:
Վարդանյան Ա., Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները.- «Հայերենագիտության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018:
Samuelian V., Le dialecte des Armոniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours - Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Ստեփանակերտ, 2001:

Варданян А., Изгнание коренного армянского населения из Нахиджевана - Зов вишапасара: статьи, эссе, рассказы, Е., 2010.

Vardanyan Artak- The Dialectal Overview of Nakhijevan. - The territory of Nakhijevan covers the crossroads of historical ashkhars Vaspurakan, Ayrarat and Syunik of Great Armenia. This circumstance, as well as the mass migration of the population contributed to the dialectal diversity in the territory of Nakhijevan.

On the eve of the events of 1918-1920, when the absolute majority of the population were Armenians, the territory of Nakhijevan covered about seven dozen Armenian-populated settlements, the overwhelming part of which spoke the Khoy dialect, as well as Maghara dialect. Indigenous dialects were preserved too - Agulis dialect, Jugha dialect, Chahuk-Vayk interdialect, subdialects of Ararat and Artsakh dialects, also Northern Goghtn interdialect.

In the diversity of these 8 dialects Agulis (Zok) dialect stands out, the last speakers of it were expelled from the village of Tsghna of the historical province of Goghtn in 1989.

Keywords: territory of Nakhijevan, Ayrarat, Syunik, Vaspurakan, dialect, interdialect, subdialect.

Artak Vardanyan, PhD in Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Senior Researcher.

Варданян Артак- Палитра диалектов Нахиджевана. - Территория Нахиджевана охватывает перекресток исторических ашхаров Васпуракан, Айрарат и Сюник Великой Армении. Это обстоятельство, а так

же массовые переселения населения способствовали диалектному многообразию на территории Нахиджевана.

В канун событий 1918-1920гг., когда абсолютное большинство населения составляли армяне, территория Нахиджевана охватывала около семи десятков армянонаселенных пунктов, подавляющая часть которых пользовалась говорами Хойского диалекта, а также Марагинским диалектом. Сохранились и коренные говоры – Агулисский диалект, Джугинский диалект, Джаук-вайкский междиалект, говоры Араратского и Арцахского диалектов, а также междиалект Северного Гохтна.

В разнообразии этих 8-и диалектов выделяется своеобразностью агулисский (зокский) диалект, последние носители которого в 1989 году были изгнаны из села Цхна исторической провинции Гохтн.

Ключевые слова: территория Нахиджевана, Айрарат, Сюник, Васпуракан, диалект, междиалект, говор.

Варданян Артак, кандидат филологических наук, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник.

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ՃԵՂՔ, ԽՈՐՇ» ԻՄԱՍՏՈՎ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

Զաքարյան Հովհաննես
բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» ԳԿՀ, լեզվաբանության բաժանմունքի ղեկավար.
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հնդեվրոպական նախալեզու, արմատական տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ձայնդարձ, սահող s-, ածանց:

Նախաբան

Հոդվածը վերաբերում է հ.-ե. *(s)keu- (<*sek-) «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից սերված հայերեն մի շարք այնպիսի բառերի ստուգաբանությանը, որոնք ունեն «ճեղք, խորշ» և դրան անմիջապես հարող իմաստներ:

Նշված արմատի ածանցյալները լայն տարածում, ձևային և իմաստային բազմազան ճյուղավորումներ ունեն հ.-ե. լեզուներում, այդ թվում՝ հայերենում: Դրանց մեծ մասը ստուգաբանված է և տեղ է գտել հանրահայտ բառարաններում: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռ մեծ թիվ են կազմում չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված բառերը: Աշխատանքի արդյունավետություն ապահո վելու նկատառումով սահ-

* Ներկայացվել է 07.11.2023, գրախոսվել՝ 20.11.2023:

մանափակվել ենք նշված արմատից սերված հայերեն բառերի իմաստային մեկ ճյուղավորումով՝ «ճեղք, խորշ» իմաստային դաշտով, ինչպես նաև իմաստով դրանց անմիջապես հարող մի շարք բառերով։ Դա կարևոր է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրությունն ամբողջացնելու առումով։

Հայերենում «ճեղք, խորշ» իմաստով կան հոմանիշ բառերի շարքեր՝ *խոր (խորշ, խորխորատ) – խոռ (խոռոչ) – խար-ափ* «խորխորատ» – *կիր-ճ – սոր (սորսոր)* «ձոր, խոռոչ» – *ծործոր* «ժայռի խոռոչ» – *ձոր – ջաո* «խոռոչ», *կր-էճ* «փոքր գուռ, փոս» – *կուր* «տաշտակ», *քար-թ* «խազ» – *քեր-ծ* «թեթևակի խազ» – *կոր-ի* «ակոս» – *ծեր-պ* «ճեղք» – *ծոր-ծ* «անցք» և այլն, որոնց արմատները նաև հնչյունապես աղերսվում են միմյանց՝ տարբերվելով ածանցներով, ածականներով, ձայնդարձի աստիճաններով, բաղաձայնական օրինաչափ հերթագայություններով, հնչյունափոխություններով, սակայն մինչ այժմ առկա բառարաններում ու գիտական ուսումնասիրություններում բխեցվել են հաճախ միանգամայն տարբեր ու տարասեռ աղբյուրներից կամ մնացել են չմեկնաբանված։ Սույն հոդվածի խնդիրներից են հոմանիշային շարքեր կազմող այդ բառերի միջև ծագումնաբանական համակարգային կապեր հայտնաբերելը և հ.-ե. նույնական սկզբնաձևերից բխեցնելը։

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. *(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատը և նրա՝ սղված, ապա զանազան ածականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված, շարժուն (սահող) s-ով կամ առանց դրա, շնչեղացած/չշնչեղացած, քմայնացած/

չքմայնացած, շրթնայնացած/չշրթնայնացած k-ով տարբերակների ածանցյալները հ.-ե. լեզուներում, այդ թվում՝ հայերենում[1], են-թարկվել են իմաստային ամենաբազմազան զարգացումների։

Այդ արմատի իմաստային հիմնական ճյուղավորումներից են «խորշ, խոռոչ, ձոր, ճեղք» նշանակությամբ բառերը։ Հայերենում ստուգաբանված են բազմաթիվ բառեր, որոնցից հիշենք հետևյալները. *ցեղ* «ճեղք, պատռվածք» [<*sk′el-][2], *ցիտ* «մարմինը բզկըտված՝ պատառոտված» [<*sk′id-] (ՀԱԲ, 4, 455-456), *խոր* «փոսորակ» (որից՝ *խորխորատ* «խոր փոս, վիհ, անդունդ», *խորխոլ* «հողի ճեղք՝ ճաք») [<*khoro-][3], *խորշ* «փոս, խոռոչ, անկյուն, ծալք, կնճիռ, ծոց» [<*khor-s-] (ՀՍԲ, 345), *խուց* «փոքր սենյակ, մենարան» [<*khusk′o-] (ՀՍԲ, 350), *խինձ* «գոգ, խորշ, անկյուն, ծոց, ծալք» [<*khindio-] (ՀՍԲ, 331), *խարափ* «խորխորատ» [<*khorəph-] (ՀՍԲ, 320), *սոր* «1. ձոր, հովիտ, 2. ծակ, խոռոչ, ծերպ, 3. որջ, բույն» [<*k′ovros-] (ՀԱԲ, 4, 245, ՀՍԲ, 688), *քարթ (քառթ, քերթ)* «խազ, կտրվածք, քերծվածք» [<*(s)

---

[1] Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանական բառարան»-ում» [**J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch.* Bern-München, 1959 (http://dnghu.org/ indoeuropean. html) (այսուհետև՝ Պոկ.)] և Ս. Նիկոլաևի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» [**S. Nikolaev**, *Database of Indo-European etymology*.-http://starling.-rinet.ru/cgi-in/response. cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first (այսուհետև՝ Նիկ.)] մասնավորապես *sken- «կտրել, պոկել», *(s)ken-(d-)- «մաշկել, ճեղքել», *(s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կտրել», *(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ։

[2] Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 452-453։

[3] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետև՝ ՀՍԲ), էջ 343։

kər-t-][4], *քերծ* «թեթևակի խազ՝ կտրվածք՝ ակոս» [<*(s)ker-ծ] (ՀԱԲ, 4, 573), *խզ-ել (խուզ)* «պոկել, կտրել, հատել» (որից՝ *խզ-վածք* «կտրվածք, պատռվածք» [<*khu-gʻh-] (ՀՍԲ, 328), *կիրճ* «խորաձոր» [<*(s)kēr-d-io-] (Զաք., 2016, 90), *ճեղ-ք* [<*sqel-][5], *ճաք* «փոքր ճեղք» [*skʻhə-k-], *ճաթել* «ճաքել» [<*skʻhə-t-], *կիճ* «քարի ծերպ՝ ճեղք» [<*(s)kē-d-io-], *կր-էճ (կրիճ)* «1. աման, թաղար, 2. փոքր գուռ, փոս» [<*(s)kō-r-], *կուր* «նավակ, մակույկ, տաշտակ» [<*(s)kō-r-], *կօշ* «1. ամուր կեղևով դդումից ջրաման, 2. կրիայի պատյան» [<*(s)kəu-skh-], *կոտ* «պատյան, խեցի (կրիայի)» [<*(s)ko-t-], *սկրթ-ել* «1. քերել, պոճոկել, 2. քերթել, 3. ճողոպրել, դուրս պրծնել, 4. սայթաքել, 5. կողոպտել» [*(s)kʻō-g-ro-t-], *խազ* «քերծվածք» [<*khə-gʻh-], *կորի* «ակոս, արտի առու, փոքր ջրանցք» [<*(s)ko-r-io-][6], *խուզ-ել (խոյզ)* «կտրել, հնձել» [<*kheu-gʻh-], *խզ-ել (խուզ)* «պոկել, կտրել» [<*khu –

---

[4] Տե՛ս **Ն. Սիմոնյան**, *Ստուգաբանական դիտարկումներ.*- «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Ե., 2016, հմ. 1 (խմբ.՝ Հ. Միրզոյան), էջ 26-32; **Հ. Զաքարյան**, *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն.*- «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV Միջազգային գիտաժողով (2016 թ. հոկտեմբերի 13-14, ՀՀ, Վանաձոր), գիտական նյութերի ժողովածու (խմբ.՝ Գ. Խաչատրյան), Ե., 2016, էջ 87-91 (այսուհետև՝ Զաք., 2016):

[5] Տե՛ս **Է. Աղայան**, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետև՝ Աղ.), էջ 113-115, **Հ. Զաքարյան**, *Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.* - «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ» (խմբ.՝ Ս. Հայրապետյան), 1-2 (22), 2019, Գյումրի, էջ 228-238 (այսուհետև՝ Զաք., 2019.ա):

[6] Տե՛ս **Հ. Զաքարյան**, ***Կեղեքել, խողխողել, քակ(տ)ել, կէս*** *և մի քանի այլ բառերի ստուգաբանություն*, «Արդի հայերենագիտության խնդիրները» խորագրով առցանց գիտաժողով, ՀԳԱ ԼԻ, 2020.- http:// language. sci. am/ sites/default/ files/hovannes_ zakaryan.pdf

gʻh-] (ՀՍԲ, 346), *խիզ-ար* «մեծ սղոց» [<*khēi-gʻh-] (ՀՍԲ, 329), *խիլ (խլել)* «անջատում, խզում» [<*khēl-] (ՀՍԲ, 330), *խողխողել (խոհխոհել)* «սրատել, մորթել» [<*khol-՝ կրկնությամբ] (ՀՍԲ, 339), *խոփ* «գութանի՝ հողը ճեղքող մասը» [<*khopho-] (ՀՍԲ, 350) և այլն: Այլ լեզուներից նույնարմատ հոմանիշների օրինակներ են՝ հ.իսլ. skarð «ծակ, անցք, քարթ, կտրվածք», skor «ճեղք, ճաք, քարթ», ռուս. черево «ընդերք, փորոտիք», черва «փոսիկ» (ՀՍԲ, 343, խոր), ռուս. щель «ճեղք», մ.իռլ. scalp «ճեղք, խոռոչ», հ.իսլ. slita «պատռել, ճեղքել» (Աղ., 114-115), լատվ. skārdît «ճեղքել», լիտվ. skrañdis «փորոտիք», ռուս. щерба «ճաք, քարթ, սպի», լատվ. šḱirẽba «ճաք, ճեղք», լատ. scrobis «փոս, խոռ», մ.բ.գերմ. schreffen «ճեղքել, քերծել, քերել», մ.իռլ. cerb «սուր, հատու, կտրուկ», մ.ս.գերմ. scharven «կտրատել, ճեղքել», լատվ. šḱirpta «քառթում, թործում» (Պոկ., (s)ker-4), լատվ. caũrs «փչակ, խոռոչ», մ.իռլ. scothaid «կտրվածք» (Պոկ., skēu-6) և այլն:

Սույն հոդվածով առաջարկում ենք հ.-ե. *(s)keu- «կտրել, հատել, ճեղքել» արմատից սերված տարալեզու օրինակների այս շարքին ավելացնել հայերեն հետևյալ բառերը:

Ծերպ «1. ճեղք, արանք, բացվածք, պատռվածք, 2. անցք, ծակ, 3. ծայր, գագաթ» բառի համար Հ. Աճառյանը հավաստի ստուգաբանություն չի տվել (ՀԱԲ, 2, 437): Գ. Ջահուկյանը քիչ հավանական է համարել Հյուբշմանի՝ Աճառյանի մերժած առաջարկը՝ կապելու հ.-ե. *gʻep(h)-/*gʻebh- «ծնոտ, բերան» արմատի հետ (ՀՍԲ, 357): Ելնելով իմաստից՝ առաջարկում ենք *ծերպ* <*(s)kʻheu-ro-պ-<*(s)keu-

«կտրել, ճեղքել» ստուգաբանությունը[7], որում *-ro-ն հ.-ե. ածանց է[8], **ա-*ն՝ հետնախալեզվյան (ներհայերենյան) աճական:

Ծործոր (ծոծոր) «1. փոքր ու նեղ ձորակ, հեղեղատ, 2. ժայռի խոռոչ, խորշ, ծերպ» բառը[9] Հ. Աճառյանը կապել է *ծորել* «հոսել» բառի հետ՝ թողնելով առանց ստուգաբանության (ՀԱԲ, 2, 469)[10]:

Իմաստով և ձևով ակնհայտորեն առնչվում է նախորդ՝ *ծերպ* բառի արմատին՝ ձայնդարձի այլ աստիճանով, ուստի առաջարկում ենք *ծործոր* <*(s)kʻhou-ro- (կրկնությամբ) ստուգաբանությունը՝ նկատի ունենալով *ծոր-* «հոսք» և *ծոր-* «ձոր» արմատների համանունություն (տե՛ս նաև ստորև՝ ծանոթություն 17): Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 366) հնարավոր է համարել, որ *ծործոր «ձորակ, փոքրիկ հովիտ»* բառի ածանցյալ է *ծոծրակ (ծոծորակ, ծործորակ) «վզակոթի փոսիկ, պուճուճակ»* կրկնավորը: Մեր ստուգաբանությամբ հաստատվում է այդ ենթադրությունը, քանի որ ծոծրակն իսկապես ակոսաձև փոսիկ է:

---

[7] **Ծ** սկզբնահնչյունի հ.-ե. ծագման վերաբերյալ տե՛ս **Հ. Զաքարյան**, *Ծ* սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու) (խմբ.՝ Վ.Կատվալյան), Ե., 2019, էջ 35-45 (այսուհետև՝ Զաք., 2019.բ):

[8] Այս -ro ածանցի մասին տե՛ս նաև **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի,* հ. III, Ե., 1957, էջ 65-66:

[9] Իմաստի համար տե՛ս **Ս. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետև՝ Մալխ.), հ. 2, էջ 353, *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե., 2002 էջ 421:

[10] Գ. Ջահուկյանը հնարավոր է համարել *ծորել* «հոսել» բառի քարթվելական ծագումը (ՀՍԲ, 367), որ, ըստ մեզ, համոզիչ չէ: Այդ մասին տե՛ս **Հ. Զաքարյան**, *«Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.*- «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու) (խմբ.՝ Վ. Կատվալյան), Ե., 2021, էջ 126-137 (այսուհետև՝ Զաք., 2021):

Սորսոր «ծերպ, խոռոչ» բառը թե՛ ձևով, թե՛ իմաստով շատ նման է *ծործոր* բառին: Սրա արմատական *սոր* տարբերակը նշանակում է «1. ձոր, հովիտ, 2. ծակ, խոռոչ, ծերպ, 3. բույն, որջ» (այս արմատից են՝ *սորել* «ծկթել (ատամը)», *սորան* «1. անդնդախոր կիրճ, 2. լեռնիվայր սահուղի» (ՀԼԲԲ, Ե, 281): Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը Յ. Պոկոռնու հետևողությամբ *սոր*-ը բխեցրել են հնխ. *k′ovros- «փոս, խոռոչ» նախաձևից (ՀԱԲ, 4, 245-246, ՀՍԲ, 688): Սակայն կարծում ենք՝ նախընտրելի է *սոր* արմատը պարզապես համարել *ծոր*-ի հերթագայական տարբերակ՝ հ.-ե. *(s)k′ou-ro- <*(s)keu- «կտրել, ճեղքել» նախաձևով, որում *-ro-ն ածանց է:

Ծործ «1. անցք (ամբարի, ջրաղացքարի), 2. թոնրի ակ՝ օդանցք» (Մալխ., 2, 352, ՀԼԲԲ, Բ, 421) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Սա թերևս կազմված է նախորդ՝ *ծործոր* բառի արմատից՝ *ծ* ածականով: Ուստի առաջարկում ենք *ծործ* <*(s)k′hou-ro-ծ <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *-ro-ն ածանց է, *ծ*-ն՝ ածական: Անշուշտ, այս բառի ածանցյալն է *ծործել* «թաքուն փախչել» (ՀԼԲԲ, Բ, 421) բառը (իմաստային անցման համար հմմտ. *ճողոպրել* «1. փրցնել, խլել, պոկել, 2. փախչելով փրկվել, պրծնել, ծլկել», *ճղել* «1. պատռել, ճեղքել, 2. ճողոպրել», *սկրթել* «1. քերել, պոճոկել, քերթել, 2. ճողոպրել», *ծլկել (ճլկել)* «1. ծլել, 2. փախչել, անհետանալ, աննկատ գնալ» [<*ծուլուկ <*(s)k′hōlō-g^{w}- <*(s)kel- «կտրել, անջատել»], անգլ. lam «1. ջարդել, ծեծել, 2. փախչել, ծլկել, ճողոպրել», ռուս. удрать «ծլկել, ճողոպրել» драть «պատառոտել, քրքրել, քերծել» բառից):

Ծակ «1. անցք, սոր, 2. ծերպ, ճեղք, 3. անձավ, խոռոչ, խորշ, 4. խուց, բույն, որջ, 5. բանտ, 6. խոց, 7. ականատ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 2,

437, ՀՍԲ, 357): Հայերենում հնուց գործածական է իր բազմաթիվ իմաստներով ու ածանցյալներով (*ծակել, ծակոտի, ծակիչ, ծակուռ, ծակոց, ծակծկոց, ծակամուտ* ևն): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք *ծակ* <*(s)kʻhə-g^{w}- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *g^{w}-ն ածական է:

Ծկթել (ծկտել) «1. ծակելով դուրս գալ, ծլել, բուսնել, 2. կտրել, թոցնել, պոկել, 3. փախցնել, գողանալ» (Մալխ., 2, 344, ՀԼԲԲ, Բ, 414) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստային զարգացման առումով հմմտ. *կեղեքել* «1. պլոկել, 2. կողոպտել», *կորզել* «1. պոկել, 2. փախցնել», *շոպել* «1. պոկել, 2. խլել» և այլն: Իր բուն իմաստով սերտորեն առնչվում է նախորդ՝ *ծակ* բառին: Առաջարկում ենք *ծկթ-ել (ծկտ-ել)* <*ծուկ-թ/տ- <*(s)kʻhō-g^{w}- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *ծուկ- արմատը *ծակ*-ի ձայնդարձային տարբերակ է, *g^{w}-ն հ.-ե. ածական է, իսկ *թ/տ*-ն՝ հետնախալեզվյան ածական:

Ծկռթ(վ)ել «սկրթվել, քերծվել (մաշկը)» (Մալխ., 2, 344, ՀԼԲԲ, Բ, 414) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Սրան ձևով և իմաստով գրեթե նույնական է վերոհիշյալ *սկրթ(վ)ել* բառը (*ս/ծ* հերթագայությամբ և *ր–ռ* սաստկական անցմամբ): Ակնհայտ է հատկապես ձևային նմանությունը նաև *ծկթ-ել* բառի հետ: Առաջարկում ենք *ծկռթ-ել* <*ծուկտ-թ- <*(s)kʻhō-g^{w}-ro- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *-ro-ն ածանց է, *g^{w}-ն հ.-ե. ածական է, իսկ *թ*-ն՝ հետնախալեզվյան ածական:

Ծմին «ծակ, շնչանցք, շնչահան» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 2, 464, ՀՍԲ, 365): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք *ծմին* <*ծում-ին <*(s)kʻhō-m- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *m-ն ածա

կան է *–ին*-ը՝ վերջածանց (հմմտ. *եղև-ին, ոստ-ին, դարբ-ին* (ՀԱԲ, 1, 636) և այլն):

Ջոր «կիրճ, ծործոր, նեղ հովիտ, խոր հեղեղատ, խրամ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 158)։ Գ. Ջահուկյանը կասկածով բխեցրել է հ.-ե. *g′houoro-՝ *g′heu- «լցնել, թափել» արմատից (ՀՍԲ, 477), սակայն սա Պետերսոնի կարծիքն է, որը մերժել է Հ. Աճառյանը (ՀԱԲ, նույն տեղում)։ Նկատի ունենալով վերոհիշյալ *ծոր-, սոր* հոմանիշ արմատների հետ նաև ձևային մերձավորությունը (*ձ/ծ/ս* հերթագայությամբ), այլև վերոհիշյալ նույնարմատ *խոր*-ը (որից՝ *խորխորատ* «խոր փոս, վիհ, անդունդ»)՝ առաջարկում ենք *ձոր* <*(s)k^{w}hou-ro- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որով փաստորեն սահմանում ենք **(s)k^{w}h > ձ* հնչյունական համապատասխանությունը՝ ի լրումն բառասկզբի **sk-* հնչյունակապակցության հայերեն անդրադարձների **(s)k > ք, *(s)k′ > ս, *(s)kh > խ, *sk > կ, *sk′ > ց, *skh > շ, *(s)k′h > ծ, *sk′h > ճ, *(s)k^{w}h > զ, *sk^{w}h > ժ, *sk^{w}h > ջ* շարքի[11]: Այս վարկածի օգտին են վկայում նաև *ձող – զոլ – ցօղ(ուն) – ջոխ – ճաղ – ճիւղ – շիւղ – ծեղ – ճեխ – քեղ, ձաղկ – ջախ (ջաղջ, ջանջխ) – ջալ (ջայլ) – ճախ – ցախ, ձաղ – ծաղր, ձորձորենի – ծոր(ծոր)ենի «կոծոխուրենի», ձրձել – շորթել – կորզել, ձորձ – քուրձ – քուրջ, ձանձաղ – ծանծաղ(ամիտ) – ցանցառ(ամիտ)* և այլ բառափնջերում առկա *ձ/զ/ջ/ճ/շ/ծ/ք, ձ/ջ/ճ/ց, ձ/ծ, ձ/շ/կ, ձ/ք,*

[11] Այս շարքի մասին տե՛ս նաև Ջաք., 2019. ա, 228-229, Ջաք., 2019.բ, 35-38, Ջաք., 2021, **Հ. Ջաքարյան**, *«Յատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.*- «Ջահուկյանական ընթերցումներ», ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային առցանց գիտաժողովի նյութեր (Երևան, 2020 թ., դեկտեմբերի 17-18) (խմբ.՝ Վ. Գատվալյան), Ե., 2020, էջ 65-76:

ձ/ծ/ց հերթագայությունների դեպքերը, որոնք բառասկզբի **sk-*ի հնարավոր զարգացումների շրջանակում են: Ինչ վերաբերում է «կտրել, ճեղքել- ձոր, կիրճ» իմաստային կապին, ապա դրա վկայությունն է բարբառային *ձորթել* «կտրել, հատել» բառը (ՀԼԲԲ, Գ, 340), որն ակնհայտորեն կապ ունի *ձոր* արմատի հետ՝ *թ* ածականով (տարալեզու զուգահեռներ տրված են ստորև՝ *խոխոմ* բառի առիթով): Նույն արմատից է նաև *ձորել* «փախչել» (Մալխ., 3, 180) բառը (իմաստային անցման համար տե՛ս վերը՝ *ծործել* «փախչել» բառի առիթով բերված զուգահեռները): Հմմտ. նաև վերոհիշյալ նույնարմատ *կիրճ, խարաւի* բառերը:

Խոռ «1. փոս, ճեղք, փչակ, ծերպ, 2. անցք, բացվածք (պատի), 3. խրամ, ձորակ, 4. կտոր, հատված, 5. տձև, խեղված» (որից՝ *խոռել* «1. պատի մեջ անցք բացել, 2. վերք բացել, 3. սիրտը կոտրել, 4. մի մաս կտրելով՝ եղծել, խեղել», *խոռոչ (խոռոջ, խորոջ)* «փոս, ծակ», *խոռնոքիլ* «մարմինը վնասել՝ խեղել», *անխոռ* «անեղծ, ամբողջական», *խոռատ* «կիսատ, կոտրված», *խոռուկ* «բերանը կոտրած (աման)», *խոռճակ* «պատի ծերպ», *խոռճել* «փոս բացել», *խոռճկել* «հորել, թաղել», *խոռն* «միջլեռնային իջվածք», *խոռնացնել* «խորացնել») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են փոխառություն արամ. hōrā (կամ xōrā) «ծակ, խոռոչ» ձևից (ՀԱԲ, 2, 398-399, ՀՍԲ, 342): Համոզիչ չէ այն, որ *խոռ, խոր, խորշ* հոմանիշ հարանուններից մեկը մեկնաբանվել է որպես սեմական փոխառություն, իսկ մյուսները՝ ո՛չ, կամ որ *խոր, խորշ* (նաև *հոր*) բառերը Գ. Ջահուկյանը համարել է բնիկ, իսկ *խոռ* -ը՝ ո՛չ: Մինչդեռ *ր – ռ* լծորդությունը հայերենում շատ սովորական է (հմմտ. *մոռ – մոր(ի), կեռ – կոր, սեռ – սեր(ունդ), թառամ – թարշամ, մաճառ – մաճար, տառ – տարր,*

թիռ – թեր, շուռ – շուրջ ևն)։ *Խոռ* արմատը հայերենում իմաստային ու գործառական լայն զարգացումներ ունի, և եթե սեմական լեզուներում էլ կա համանուն կամ հարանուն արմատ, ապա դա կա՛մ պատահականություն է, կա՛մ նոստրատիկ ընդհանրություն։ Իսկ *խոռ* արմատը, որ փաստորեն *խոր*-ի տարբերակ է (հմմտ. հատկապես *խոռնացնել-խորացնել* զույգը) տրամաբանորեն պետք է բխեցնել հ.-ե. նույն նախաձևից, ինչ *խոր (խորշ)*-ը։ Հետևաբար առաջարկում ենք *խոռ* <*khou-ro-s- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *s-ն ածական է[12]։

Ջառ «անձավ, խոռոչ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 123, ՀՍԲ, 650)։ Սրա հոմանիշներ են *սոր, ծերպ, խոռ, խորշ, խոռոչ*, որոնց հետ նաև ձևային նմանությունը (ձայնդարձային տարբերությամբ) հիմք է տալիս ենթադրելու նույնարմատություն։ Ուստի առաջարկում ենք *ջառ* <*skʷhəu -ro-s-<*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, ուր *s-ն ածական է, *-ro-ն՝ ածանց (ջ սկզբնահնչյունի մասին տե՛ս Ջաք., 2021)։

Խոխոմ (խոխում, խոհում) «1. թփոտ ձոր, նեղ ծործոր, 2. առվամեջ, հոսանքի հուն» բառի ստուգաբանության մասին հայտնել են հակադիր կարծիքներ։ Խնդիրն այն է, որ ըստ երևույթին գործ ունենք իմաստով բաղարկված համանունների հետ, և պետք է տարբերել մի կողմից՝ *խոխոմ* «ձոր», մյուս կողմից՝ *խոխոմ (խխում)*

[12] Հ.-ե. *rs կապակցությունը հայերենում կարող է տալ թե՛ *ռ*, թե՛ *րշ*, հմմտ. *մոռ, մոշ (<*մորշ)* <*mor-s- (ՀԱԲ, 534, մոռ, ՀԼՊ, 255), *թոռոմ, թորշոմ* <*tor-s- (ՀԱԲ, 2, 155-156, թառամ)։ Նույնպիսի տարբերակային զույգ պիտի համարել *խոռ- խորշ* բառերը։ Այս տարբերակայնությունը կարող է հարաբերակցվել թե՛ տարածքային, թե՛ ժամանակային գործոնի հետ։

«թաց(ություն)» բառերը։ Այս վերջինի ածանցյալներ ու տարբերակներ են *խոխոմել (խողոմել*[13]*, խոխել)* «ոռոգել, լավ ջրել», *խոխոմեալ (խողոմեալ)* «ջրառատ» (ՀԱԲ, 2, 386), *խոխոմել (խխմել)* «ջուր բխել, ջուր վազել» (Մալխ., 2, 280), *խոխմել* «ալյուրը խոնավությունից բորբոսնել» (ՀԼԲԲ, Բ, 347), *խողմել* «ցանելուց առաջ արտը ջրել՝ հողը փափկացնելու համար» (ՀԼԲԲ, Բ, 348), *խխում (խուխում)* «թաց, խիստ թրջված» (որից՝ *խխմել* «1. ջրել, ոռոգել, 2. հեղուկ ներծծել, 3. ջրից փափկել՝ կակղել, 4. խոնավությունից վնասվել, 4. լխկել (ծիրանը ևն)», *խխվել* «1. ջրից փափկել՝ կակղել») (Մալխ., 2, 267, ՀԼԲԲ, Բ, 333-334) բառերը։ Սրանց արմատը ակներևաբար *խոխ* (*խող*)-ն է՝ *-ում* ածանցով։ Սակայն Հ. Աճառյանը, խոխոմ-հիմքն ըստ երևույթին դիտարկելով որպես կրկնավոր կազմություն (*խում+խում*), կապել է *խում* «ըմպում» արմատի հետ (ՀԱԲ, 2, 386), որն էլ համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (ՀԱԲ, 2, 418-419)։ Նա սրանց հետ նույնարմատ է համարել նաև *խոխում* «ձոր» բառը՝ փաստորեն դարձյալ իրար կապելով «ջուր» և «ձոր» իմաստները[14] (ՀԱԲ, 2, 386)։ Գ. Ջահուկյանը առանձնացրել է *խում*

---

[13] Ղ *-խ* անցման համար հմմտ. *ածուղ- ածուխ, սանդուղ - սանդուխ, գազաղ - գազախ* ևն։

[14] *Ծոր* «հոսք» և *ծործոր* «նեղ ձոր», *խոխում (խխում)* «թաց(ություն) և *խոխում (խոխում)* «ձոր, ծործոր» բառերի արմատների համանունության առիթով պետք է նկատի ունենալ հետևյալը։ «Ջոր, կիրճ» նշանակող տարբեր բառեր կարող են ծագած լինել տարբեր բնիմաստներից։ Հ. Աճառյանը *ծոր* բառի ստուգաբանության առիթով բերել է «հոսող ջուր (գետ) > ձոր» իմաստային անցման օրինակներ որոշ լեզուներից (արաբ. vād, թրք. dere «1. գետ, 2. ձոր») (ՀԱԲ, 468-469)։ Բայց տվյալ դեպքում իմաստային անցման այս ուղին ընտրելու դեպքում նույնանում են հ.-ե. համանուն *sk'ei- «կտրել, ճեղքել» և *sk'ei- «ցատկել, ժայթքել» արմատները՝ առաջ բերելով իմաստների խառնաշփոթ և տանելով դեպի գերանորոշություն (ռելյատի-

և *խոխում* «ձոր» բառերը՝ *խուս*-ը համարելով բնիկ (ՀՍԲ, 348), իսկ *խոխում* «ձոր»-ը՝ թերևս խեթալուվական աղբյուրից փոխառություն (<խեթ. hunhuan «հոսանք, հեղեղ, ալիք») (ՀՍԲ, 338)։ Այսինքն՝ այնուամենայնիվ դարձյալ կապել է ջրի հետ։ Մինչդեռ *խոխում* «ձոր»-ը իմաստով ուղղակի առնչվում է վերոհիշյալ *ձոր, կիրճ, ծործոր, սոր, խոռ* բառերին, և քանի որ նաև ձևն է թույլ տալիս դրանց հետ նույնարմատ համարելու, առաջարկում ենք *խոխ-ում* <*(s)kho-kh- <*(s)keu- «կտրել, ճեղքել» (*խող-ում* <*(s)kho-l-) ստուգաբանությունը, որում *kh-ն (*l-ն) ածական է (*-ում/-ում/-ամ/-եմ/-իմ* ածանցի համար հմմտ. *խորշ-ոմ (տե՛ս նաև ՀԱԲ, 2, 410, խորշ 1), խոր-ոմ, կնգ-ում, թառ-ամ, թարշ-ամ, խար-ամ, խաշ-ամ, խոհ-եմ, համ-եմ, ուշ-իմ* և այլն)։ «Կտրել, ճեղքել – ձոր, կիրճ» իմաստային կապի համար հմմտ. ռուս. ущелье «կիրճ» (щель «ճեղք»-ից[15]), բուլղ. проло́м «ձոր, կիրճ» (лом- «ճեղք, ճաք, կոտրվածք» արմատից[16]), գերմ. Kluft «1. ծերպ, ճեղք, ճաք, 2. ձոր, կիրճ, անդունդ, վիհ» (< նախագերմ. *kluftiz «ճեղքում», որից՝ անգլ. cleft «1. ճեղք, 2. կիրճ» (տե՛ս ՎԲԱ, Kluft)) բառերը, վերոհիշյալ *ձորթել* «կտրել, հատել» և *ձոր* «կիրճ» նույնարմատ բառազույգը։

վիզմ)։ Մեր նախընտրած ուղին տվյալ դեպքում այդպիսի բարդությունների և հակասությունների տեղիք չի տալիս։

[15] Հմմտ. նաև լիտվ. skélti, skeliù, լատվ. šķel^t, šķeļu «ճեղքել», լատվ. šķèle «1. կտոր, 2. հագուստի կտրվածք», šķila «բեկոր, ծղան, ճղոն», լիտվ. skiltis «կտրված մաս», skylẽ «ծակ», հ.իսլ. skilja «բաժանել, ճեղքել», հուն. σκάλλω «կտրում եմ, փորում եմ», հայ. *ցեղուլ* «ճեղքել, պատռել», խեթ. iškallāi- «կոտրել, պոկել», ռուս. скала́ «ժայռ, քերծ», ско́лок «բեկոր», ско́лька «հատված» (տե՛ս *Викисловарь*.-https://ru.wiktionary.org/wiki (այսուհետև՝ ՎԲՌ), ще́лье):

[16] Տե՛ս *Wiktionary*.- https://en.wiktionary.org/wiki (այսուհետև՝ ՎԲԱ), проло́м:

Ծոց «1. գիրկ, գոգ, 2. ծվար, ընդերք (երկրի), 3. կուրծք, լանջ, 4. արգանդ, 5. խորշ (ծովի)» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀԱԲ, 2, 469-470, ՀՍԲ, 367)։ Սա մասամբ հոմանիշ է վերոհիշյալ *խորշ, խինձ* բառերին, իսկ ձևով նման է *ծործ, խուց* բառերին, որոնք բոլորն էլ նույնարմատ են։ Իմաստային և ձևային այս առնչություններից ելնելով՝ առաջարկում ենք *ծոց* <*(s)kʻho-skʻ- <*skʻeu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *skʻ-ն աճական է։

Ծրար «1. կապոց, 2. փաթեթ, 3. քսակ, 4. կծիկ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը, հետևելով Հյուբշմանին, համարել են փոխառություն ասոր. ṣərār(ā) «քսակ» բառից (ՀԱԲ, 2, 475-476, ՀՍԲ, 369)։ Սակայն սա ոչ միայն ավանդված է Vդարից, այլև տարածված է բարբառներում, ուստի կասկածելի է փոխառյալ լինելու վարկածը։ Որպես այլընտրական վարկած՝ առաջարկում ենք *ծրար* < **ծուր-ար* <*(s)kʻhō-ro- <*skʻeu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *ro-ն հ.-ե. ածանց է, *-ար*-ը՝ հետնախալեզվյան (*-ար* ածանցի համար հմմտ. *գալ-ար, պալ-ար, կերպ-ար, տիպ-ար, պատահ-ար* ևն)։

Ծուար «1. հավաքատեղ, կայան, բույն, 2. (բրբռ.) ծովախորշ, ուր հավաքվում են ձկները» բառը (որից՝ *ծուարիլ* «1. ամփոփվել, կծկվել, կուչ գալ, 2. հավաքվելով պահվել, ծածկվել, սալարվել, սաքրվել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 470)։ Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման, թեև *ծ/թ* հերթագայությամբ քիչ հավանական կապ է ենթադրել հ.-ե. *steuə- «խտանալ, գնդվել» արմատի հետ (ՀՍԲ, 367), իսկ մեկ այլ առիթով փորձել է

կապ տեսնել նոստրատիկ լեզուների «կենդանիների խումբ» իմաստով արմատների հետ[17]: Վերոհիշյալ *ծոց, խուց, խորշ, խինձ, խոր, խորշ, սոր, ծոր* և այլ բառերի հետ իմաստային կապի հիման վրա առաջարկում ենք *ծուար* <*ծու-ար <*(s)kʹhō- <*skʹeu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը[18], որում *-ար*-ը ածանց է (այս ածանցի մասին տեʹս վերը՝ *ծրար* բառի առիթով):

Ծպտիլ «1. կերպարանափոխվելով թաքցնել ինքնությունը, դիմակավորվել, 2. խուսափել, փախչել, 3. ծածկվել, քողարկվել, թաքնվել» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 475): Գ. Ջահուկյանը կասկածով ենթադրել է փոխառություն ակկադ. sibtu «մի զգեստ» կամ subātu(m) «կտոր, զգեստ, հագուստ» բառից (ՀՍԲ, 369), որ իմաստաբանորեն բավականաչափ համոզիչ չէ: Առաջարկում ենք մեկ այլ վարկած՝ ենթադրելով **ծուպտ-* «ծածկոց, թաքստոց» արմատ՝ <*(s)kʹhō-b-t- <*(s)kei- «ծածկել, փաթաթել» <*skʹeu- «կտրել, ճեղքել» հ.-ե. նախաձևերով, նախալեզվյան **b* և հետնախալեզվյան *t* աճականներով: Այստեղ առկա է «կտրել, ճեղքել – կտոր, կաշի – ծածկ(վ)ել – թաքնվել» իմաստային անցում (դրա մասին տեʹս նաև Զաք., 2016):

Ծածուկ «1. փակ, գաղտնի, 2. անիմանալի, խրթին» բառը (որից՝ *ծածկել* «1. փակել, 2. շերտապատել, 3. պահել, թաքցնել, քողարկել» և հետադարձ բառակազմությամբ՝ *ծածկ* «1. տանիք, 2. պաշտպանիչ շերտ») Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 2, 437, ՀՍԲ, 357): Հ. Աճառյանը համարել է պարզ

---

[17] **Գ. *Ջահուկյան***, *Հայերենի անհայտ ծագման բառարմատները.*- «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հմ. 2 (խմբ.՝ Մ. Ներսիսյան), էջ 65:

[18] Հնարավոր է ենթադրել նաև ստուգաբանության *ծուար* <*(s)kʹhōə-ro- <*skʹeu- «կտրել, ճեղքել» տարբերակը, որում **-ro-*ն ածանց է:

բառ (ՀԱԲ՝ նույն տեղում)[19], Գ. Ջահուկյանը ենթադրել է կա՛մ կրկնավոր՝ *ծուկ-* արմատից (հմմտ. *մամուլ, մամուռ*), կա՛մ ածանցավոր բառ՝ *ծած-ուկ*) (ՀՍԲ՝ նույն տեղում)։ Կարծում ենք՝ ավելի հավանական է կրկնավորի տարբերակը, որի օգտին են վկայում «փակ» ընդհանուր իմաստով *ծուկ (ծուկի)* «աչքերը փակելով խաղ» (Մալխ., 2, 353), *ծուկ* «սափոր» (Մալխ., 2, 353), *ծուկալ*[20] «նեղբերան հողե սափոր, պուտուկ» (ՀԼԲԲ, Բ, 429) բառերը։ Սափորը վերջին հաշվով յուրատեսակ խորշ, փոքրիկ խցիկ է՝ հեղուկ պահելու համար։ Հետևաբար կարելի է ենթադրել **ծուկ* «1. խորշ, խցիկ, 2. սափոր, փակ ման» բնիմաստով սկզբնաձև՝ <*(s)kʹhō-gʷ- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությամբ, որում *gʷ-ն աճական է։ Այս նույն արմատի *ծկ- (<*ծուկ)* տարբերակն է առկա նաև վերոհիշյալ *ծկթել, ծկռթվել* բառերում։

Ծիʹկ «ծուկի, ճիʹթ» բառը, որ ստուգաբանական բառարաններում բացակայում է, անշուշտ վերոհիշյալ *ծուկ* արմատի ձայնդարձային տարբերակն է (նախաձևը՝ *(s)kʹhē-gʷ-)։ Սրանից են *ծիկ անել, ծ(ի)կրակել (ծկլատել, ծկլել, ծկլալ, ծկլտալ, ծլլալ, ծլկտալ, ծլվտալ, ծկլուկ անել, ծկլուտ անել)* «1. թաքնված տեղից դիտել, 2. մի պահ երևալ ու ծածկվել, 3. սուր հայացքը հառել», *ծկըլ-մկըլ* «ծկլտալով, աչքերը հառած, անհամբեր սպասելով» (Մալխ., 2, 338, 344, ՀԼԲԲ, Բ, 414) բառերը։ Այսպիսով ունենում ենք արմատային *ծիկ/ծուկ/ծակ* ձայնդարձային շարքը։

[19] Մեկ այլ առիթով նա *ծածուկ*-ը համարել է կրկնավոր (**Հ. Աճառյան,** *Հիակատար քերականություն հայոց լեզվի,* հ. III, Ե., 1957, էջ 90)։

[20] Այս բառի *-ալ* ածանցի համար հմմտ. *ծաւ-ալ, տարգ-ալ, թաւ-ալ, տապալ-ել* ևն։

Ճի՛կ «ծուկի, ճի՛թ» (որից՝ *ճիկ անել, ճիկ-վիկ անել* «որևէ տեղից թաքուն նայել») բառը (ՀԼԲԲ, Գ, 387) *ծիկ*-ի հոմանիշն է և հարանունը: Սա նույնպես բացակայում է ստուգաբանական բառարաններում: Դժվար չէ ենթադրել, որ *ծիկ*-ը և *ճիկ*-ը նունարմատ են՝ *ծ/ճ* հերթագայությամբ: Ուստի *ճիկ*-ի նախաձևը կլինի՝ *sḱhē-g^{w}-<*(s)keu- «կտրել, ճեղքել», որում *g^{w}-ն ածական է:

Ճի՛թ «ծուկի, ծի՛կ» (որից՝ *ճիթ անել* «1. ծուկի անել, 2. Պտուղները տերևների միջից փայլփլել՝ երևալ՝ ծիկրակել» (Մալխ., 3, 209)) բառը ստուգաբանական բառարաններում չկա[21]: Նախորդ՝ *ծուկ(ի), ծիկ, ճիկ* բառերի հետ իմաստային կապից (հոմանշությունից), ինչպես նաև ձևային նմանությունից ելնելով՝ ենթադրում ենք նաև ծագումնաբանական առնչություն՝ առաջարկելով *ճիթ* <*sḱhē-t-< *(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *t-ն ածական է:

Ճլզել «1. աչքերը կկոցել 2. պառկած տեղից կիսափակ աչքերով նայել» (Մալխ., 3, 212, ՀԼԲԲ, Գ, 392) բառը չկա ստուգաբանական բառարաններում: Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք *ճլզել*<*ճզլել* (դրափոխությամբ)<*ճզել*<*ճիզ-ել* <*sḱhē-gʻh- <*(s)keu- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում gʻh-ն հ.-ե. ածական է, *լ*-ն՝ բարբառային սաստկական դրափոխված միջածանց (հմմտ. *բկլլիկ, փամփլլիկ, դմբլլո, խաբլլան, վախկլլոտ* ևն):

Ճկուռ (բրբռ. *ջիգոռ, ջոգուռ*) «կացին, փայտահատի տապար» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 205, ՀՍԲ, 494), սակայն Գ. Ջահուկյանը նկատել է, որ նման է *սակուր (սակր)* «մարտական կացին» բառին, որ համարվում է փո-

[21] Կա դրա *ճիկ* «ճիչ, աննշան ձայն» համանունը, որ համարվում է բնաձայնություն (ՀԱԲ, 3, 199, ՀՍԲ, 493):

խառություն արամ. saqūriā ձևից, որն իր հերթին փոխառություն է լատիներենից (ՀԱԲ, 4, 160, ՀՍԲ, 663)։ Լատ. securis (ինչպես նաև նախասլավ. *sekyra-) «կացին» բառի արմատը բխեցվում է հ.-ե. *sek- «կտրել» նախաձևից (ՎԲԱ, securis)։ Հայերեն *ճկուռ*-ը ակնհայտորեն հ.-ե. ծագման ինքնուրույն զարգացում է, որի համար առաջարկում ենք *ճկուռ* <*ճիկ-ուռ <*sk′hē-g^{w}- <*(s)keu- <*sek- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որում *g^{w}-ն աճական է (*-ուռ* ածանցի համար հմմտ. *ծակ-ուռ, ճմ-ուռ, ակն-ուռ, ճապ-ուռ* և այլն (տե՛ս նաև *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1975, էջ 88))[22]։

Շաղափ «ծակիչ, գայլիկոն, գչիր» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 489, ՀՍԲ, 579)։ Սա ըստ երևույթին ածանցավոր բառ է՝ *շաղ-ափ* (ածանցի համար հմմտ. *խուս-ափ-ել, սարս-ափ, թարթ-ափ, շարշ-ափ, խարխ-ափ, խարշ-ափ, տար-ափ, շառ-ափ* ևն)։ Նկատի ունենալով իմաստային կապը վերոհիշյալ *սոր, ծերպ, ծործ, ծակ, ծկթել, ծմին, խոռ* և այլ բառերի հետ՝ առաջարկում ենք *շաղափ* բառի արմատը ևս կապել դրանց ընդհանուր հ.-ե. արմատի հետ *շաղ-ափ* <*skhə-l- <*(s)keu- «կտրել, ճեղքել» բանաձևով, որում *l-ն աճական է։

Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (*ծերպ, ծործոր, սորսոր, ծործ, ծակ, ծկթել, ծկոթ(վ)ել, ծմին, ձոր, խոռ, ջառ,*

[22] Այլալեզու նույնարմատ զուգահեռներից են՝ ռուս. секи́ра, ուկր. соки́ра, լեհ. siekiera «կացին», լատ. secēna «քուրմի սակր», վ.բ.գերմ. segansa «գերանդի», seh «խոփ», sëga, saga «սղոց», ալբ. shat «բրիչ, քաղհանիչ», ռուս. сечь, секать «հատել, կտրել», լատ. secō, -āre «էտում եմ», իռլ. ésgid «հատում է, կտրում է» (ՎԲՌ, секи́ра, сечь), անգլ. saw, գերմ. Säge, ֆրիզ. seaga, հոլ. zaag, դան. sav, շվեդ. såg, իսլ. sög, իտալ. sega «սղոց» (ՎԲԱ, saw)։

խոխոմ, ծոց, ծրար, ծուար, ծպտիլ, ծածուկ, ծի՛կ, ճի՛կ, ճի՛թ, ճլզել, ճկուռ, շաղափ և այլն), որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևույթային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. *(s)keu- (<*sek-) «կտրել, հատել, ճեղքել» արմատից:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:
Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957:
Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:
Զաքարյան Հ., «Շառափ, ցողել, ծորալ» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.- «Զահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու) (խմբ.՝ Վ. Կատվալյան), Ե., 2021, էջ 126-137:
Զաքարյան Հ., «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.- «Զահուկյանական ընթերցումներ», ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային առցանց գիտաժողովի նյութեր (Երևան, 2020 թ., դեկտեմբերի 17-18), Ե., 2020, էջ 65-76:
Զաքարյան Հ., *Ծ* սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Զահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2019, էջ 35-45:

Զաքարյան Հ., Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն.- «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV Միջազգային գիտաժողով (2016 թ. հոկտեմբերի 13-14, ՀՀ, ք. Վանաձոր), գիտական նյութերի ժողովածու (խմբ.՝ Գ. Խաչատրյան), Ե., 2016, էջ 87-91:
Զաքարյան Հ., Կեղեքել, խողխողել, քակ(տ)ել, կէս և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Արդի հայերենագիտության խնդիրները» խորագրով առցանց գիտաժողով, ՀԳԱ ԼԻ, 2020.- http://language.sci.am/sites/default/files/hovannes_zakaryan.pdf
Զաքարյան Հ., ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), 2019, Գյումրի, էջ 228-238:
Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:
Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1975:
Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:
Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
Ջահուկյան Գ., Հայերենի անհայտ ծագման բառարմատները.- «Պատմա-բանասիրական հանդես», 1990, 2, էջ 62-77:
Սիմոնյան Ն., Ստուգաբանական դիտարկումներ.-«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Ե., 2016, 1, էջ 26-32:
Nikolaev S., *Database of Indo-European etymology.* - http://starling.-rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first
Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch.* Bern-München, 1959.- http://dnghu.org/indoeuropean.html

Wiktionary / https://en.wiktionary.org/wiki
Викисловарь / https://ru.wiktionary.org/wiki

Zakaryan Hovhannes – Etymology of Several Armenian Words Meaning "Slit, Cavity". – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies of words that all come from the PIE root *(s)keu- "to cut, to split" <*sek- "to cut, cut off, sever": *ծէրպ* "slit"<*(s)kʻheu-ro-ɯ-, *ծործոր* "gulch"< *(s)kʻhou -ro-, *ծակ* "hole" <*(s)kʻhə-g^{w}-, *ձոր* "gorge, canyon" <*(s)kʻ^{w}hou-ro-, *խոռ* "pit, slit, hollow" <*khou-ro-s-, *ջառ* "cave, grotto, hollow" <*skʻ^{w}həu-ro-s-, *խոխ-ոմ* "gorge, gulch" <*(s)kho-kh-, *ծոց* "1. embrace, 2. gulf" <*(s)kʻho-skʻ-, *ծու-ար* "nest" <*(s)kʻhō-, *ծածուկ* "secret, covert" <*ծուկ <*(s)kʻhō-g^{w}-, *ջող-ափ* "borer, drill" <*skhə-l- etc.

Keywords: Proto-Indo-European, root variants, initial sound, determina tive, vowel gradation, s-mobile, affix.

Hovhannes Zakaryan, PHD in Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education,

Закарян Оганес- Этимология некоторых армянских слов, обозначающих "щель, каверна". - В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии слов, которые все происходят от ПИЕ корня *(s)keu- "резать, раскалывать" <*sek- "отрезать, разорвать": *ծէրպ* "щель" <*(s)kʻheu-ro-ɯ-, *ծործոր* "овраг, узкое ущелье" < *(s)kʻhou-ro-, *ծակ* "отверстие" <*(s)kʻhə-g^{w}-, *ձոր* "ущелье, каньон" < *(s)kʻ^{w}hou-ro-, *խոռ* "яма, щель, дупло" <*khou-ro-s-, *ջառ* "пещера, грот, дупло" <*skʻ^{w}həu-ro-s-, *խոխ-ոմ* "ущелье, овраг" <*(s)kho-kh-, *ծոց* "1. объятие, 2. залив" <*(s)kʻho-skʻ-, *ծու-ար* "гнездо" <*(s)kʻhō-, *ծածուկ*

“скрыто, тайно” <*ծուկ <*(s)kʻhō-g^{w}-, *շաղ-ալի* “сверло, бурав” < *skhə-l- и т. д.

Ключевые слова: праиндоевропейский язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, s-mobile, аффикс.

Оганес Закарян, к.ф.н., доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

2023թ. նոյեմբերի 2-3-ը ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողով, որ նախաձեռնել էր հայոց լեզվի պատմության բաժինը: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի ուսումնագիտական տարբեր հաստատությունների գիտնականներ (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, արևելագիտության ինստիտուտ, քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, ԵՊՀ, «Տաթև» գիտակրթական համալիր, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան), ինչպես նաև հետազոտողներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Չինաստանից: Գիտաժողովի աշխատանքներն ընթացան առկա և առցանց:

Գիտաժողովը սկսվեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանի բացման խոսքով: Նա կարևորեց հայոց լեզվի պատմական զարգացմանն առնչվող ուսումնասիրությունների դերը գիտության զարգացման և գիտական ձեռքբերումների լուսաբանման տեսանկյունից:

Գիտաժողովում հնչած զեկուցումներն աչքի ընկան թեմատիկ բազմազանությամբ՝ ընդգրկելով հայոց լեզվի պատմության տարբեր փուլերի և խնդիրների առնչվող հարցեր: Զեկուցումների մեծ մասը վերաբերում էին հայոց լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակների պատմական քննությանը՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, իմաստաբանության:

Պատմական հնչյունաբանությանն էին առնչվում «Հայերենի *ը* ձայնավորի մասին» (Վ. Կատվալյան), ««Ու» երկտառ նշանագրի ոսկեդարեան արտասանության խնդրի շուրջ» (Ա. Միքայելյան, (Ֆրանսիա)), «Անվանական հիմքը և անշեշտ դիրքում ձայնավորների սղումը ուրարտերենում» (Ս. Այվազյան) զեկուցումները:

Զեկուցումների մի ամբողջ շարք վերաբերում էր գրավոր հուշարձանների լեզվական և բանասիրական քննությանը: Ուշագրավ էին նորակազմ բառերը XII-XIII դդ. ձեռագիր բառարաններում (Ն. Հովհաննիսյան), անձնական դերանունների որոշ առանձնահատկությունների բացահայտումը (Մ. Ֆելեքյան), XII-XIII դդ. երկերում օտար բառերի գործածության դեպքերի քննությունը (Վ. Խաչատրյան), խոսքիմասային անցումների դրսևորումները միջնադարյան բժշկարաններում (Հ. Թադևոսյան), իրավագիտական և կրոնական եզրույթների հետազոտությունը Դավիթ Վարդապետի «Կանոնական աւրէնսդրութիւն» երկում (Ն. Դիլբարյան), Գ. Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունների առկայությունը հայերենի բարբառներում (Ս. Գրիգորյան), Ա. Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկի գրաբարյան դարձվածային միավորների ուսումնասիրությունը: Ելույթ ունեցողները բնագրագիտական հետազոտությամբ պարզաբանում էին գրավոր աղբյուրների ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, նախօրինակների և լեզվական առանձնահատկություններին առնչվող խնդիրներ:

Հայոց լեզվի պատմության նախորդ փուլերի բառապաշարի և քերականական որոշ իրողությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում էին գոյականի սեռի քերականական կարգին առնչվող դիտարկումը հայերենում (Գ. Մխիթարյան), մի-

ջին հայերենի պարբերափուլերի գիտական ըմբռնումներին վերաբերող զեկուցումները (Գ. Մկրտչյան):

Պատմական բարբառագիտության հարցեր էին արծարծվում Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի դրսևորման առանձնահատկություններին և ցուցական դերանունների կիրառությանը նվիրված Լ. Հովհաննիսյանի զեկուցումներում:

Քննարկվեցին պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայերենի և այլ լեզուների շփումների ու փոխհարաբերությունների հարցեր: Այդ տեսանկյունից առանձնանացան Ոսկան Երևանցու քերականության սահմանումների լատինական նախօրինակներին վերաբերող (Տ. Սիրունյան), խեթերենից հայերենին անցած որոշ փոխառությունների (Հ. Հմայակյան) և մուսուլմանական ծագման հայկական անձնանուններին վերաբերող զեկուցումները (Տ. Միքայելյան):

Ուշագրավ էին բառաքննությանը և ստուգաբանությանը առնչվող դիտարկումները: Հետաքրքիր էր Հ. Զաքարյանի՝ «փոքրավոր» և «ձագ» իմաստներով մի քանի բառերի ստուգաբանությունը: Հայերենի բարբառներում ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանունների մասին ինքնատիպ զեկուցում ներկայացրեց Ա. Վարդանյանը:

Առանձնանում էին նաև արևմտահայերենի քերականությանը՝ մասնավորապես խնդրառության հարցեր (Ա. Ֆիշենկճեան, Ս. Տիոյան), ինչպես նաև հայերենի գրական երկու տարբերակների բառապաշարի ընդհանրություններին և տարբերություններին վերաբերող հետաքրքիր նկատառումներ (Ս. Տիոյան, Զ. Խպլիկեան):

Զեկուցումների շուրջ ծավալվեցին առողջ գիտական քննարկումներ, արծարծվեցին տարբեր կարծիքներ և տեսակետներ:

Գիտաժողովն ամփոփեց լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը։ Նա նշեց, որ այս գիտաժողովը ևս մեկ անգամ համախմբեց Հայաստանի գիտության ոլորտի մասնագետներին՝ ստեղծելով մասնագիտական զրույցների ու քննարկումների, մտքերի և փորձերի փոխանակման բարենպաստ միջավայր։

Հնչած զեկուցումները հագեցած էին փաստական հարուստ նյութով, գիտական վերլուծությունները մեծ մասամբ համոզիչ էին։ Որոշ հարցեր ստացան նոր լուծումներ, և ըստ այդմ՝ նորովի անդրադառնալով հայոց լեզվի պատմության արդի հիմնախնդիրներին։ Հատկանշական է նաև այն, որ վաստակաշատ լեզվաբանների կողքին իրենց խրախուսելի քայլերն են անում երիտասարդ մասնագետները, որոնց զեկուցումները գնահատելի էին նյութի բավարար իմացության և գիտական ճիշտ վերլուծության տեսանկյունից։

Հայոց լեզվի պատմության բաժին

«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ»

Միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին

2023 թ. նոյեմբերի 15-16-ը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողով՝ գործընկերությամբ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական և Գավառի պետական համալսարանների: Գիտաժողովը նվիրված էր նշանավոր լեզվաբան, ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ, հետազոտողներ ՀՀ տարբեր գիտակրթական հաստատություններից՝ մասնավորապես ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական, Գավառի, Երևանի, Վանաձորի պետական համալսարաններից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, «Տաթև» գիտակրթական համալիրից, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից, Անատոլ Ֆրանսի անվան միջազգային ֆրանսիական կրթահամալիրից, ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտահրատարակչական կենտրոնից, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսից, Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոցից, ինչպես նաև Լեհաստանի Պոմորիեի համալսարանի բանասիրության ինստիտուտից: Որոշ զեկուցողներ մասնակցում էին առցանց:

Գիտաժողովի աշխատանքներն սկսվեցին նոյեմբերի 15-ին: Բացման խոսքով հանդես եկավ և մեծ գիտնականի գիտական ժառանգությանն ու գիտամանկավարժական գործունեությանն անդրադարձավ ԳԱԱ ԼԻ տնօրեն Վիկտոր Կատվալյանը: Գիտաժողովին մասնակցում էր ՀՀ ԳԱԱ ՀՀԳ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանը, որը ողջունեց գիտաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին, նաև հետաքրքիր հուշեր պատմեց՝ ներկայացնելով Էդուարդ Աղայան անհատի մարդկային հատկանիշները՝ սրամտություն, կենսուրախություն, բարյացակամություն:

Վ.Կատվալյանի նախագահությամբ աշխատանքները շարունակվեցին լիագումար նիստում, որի ընթացքում ներկայացվեցին Էդուարդ Աղայանի կյանքին և գիտական գործունեությանը վերաբերող զեկուցումներ: Հետաքրքիր զեկուցմամբ հանդես եկավ Հ. Սուքիասյանը՝ Էդուարդ Աղայանին բնութագրելով որպես մարդու և գիտնականի: Աղայանի ստուգաբանաբանական և բառագիտական գործունեությունը ներկայացրեց Ն. Սիմոնյանը:

Այնուհետև գիտաժողովի երկօրյա աշխատանքները շարունակվեցին տարբեր բաժանմունքներում, որոնցում հետաքրքիր և բազմաբնույթ զեկուցումներ հնչեցին ինչպես տարբեր հարցերի շուրջ Է. Աղայանի լեզվաբանական հայացքների, այնպես էլ հայերենի և նրան հարաբերակից այլ գիտակարգերի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Լեզվի կերպընկալման աղայանական փիլիսոփայությանն անդրադարձավ Դ. Գյուլզատյանը, Թ. Ասոյանը ներկայացրեց «Է. Աղայանը և հայերենի հոլովման համակարգի հարցերը» խորագրով զեկուցումը: Լ. Թելյանն անդրադարձավ շարահյուսության

հիմնական միավորի՝ Է. Աղայանի մեկնաբանությանը: Ս. Պապիկյանը ներկայացրեց Է.Աղայանի ժամանակակից հայերենի բառապաշարի քննությանը նվիրված աշխատությունները: Է. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատության էջերում օտարաբանությունների և փոխառությունների սահմանազատման սկզբունքներին և գնահատմանն էր նվիրված Վ. Ներսիսյանի և Թ. Բատիկյանի զեկուցումը: Վ. Կատվալյանը ներկայացրեց Է. Աղայանի հայացքները բարբառների ծագման, բարբառների դասակարգման վերաբերյալ, Ջ. Բառնասյանը՝ Աղայանի դիտարկումները հայոց հին ամսանունների հարցի մասին:

Զ. Աղաջանյանը ներկայացրեց Է. Աղայանի աշխատություններում լեզվի կանոնարկման սկզբունքներին ու օրինաչափություններին վերաբերող դիտարկումները: Քննարկվեցին գրաբարի համադրական պատճառական բայերի խնդրառական արժույթը (Գ. Խաչատրյան), քերականական վերաիմաստավորումները միջին հայերենում (Թ. Շահվերդյան)*:* Ստուգաբանական դիտարկումներ կատարվեցին *Լաչին* տեղանվան (Ա. Վարդանյան), *բերկրանք* բառի (Հ. Զաքարյան) վերաբերյալ: Անդրադարձ կատարվեց հին հայերենի *«S + V + S» (յոյ, ւաւ, ւու)* կաղապարով եռաբարբառակերպերի տարաժամանակյա բնութագրերին (Վ. Պետրոսյան), *Adduru* և *Eritia* սեպագրային լեռնանուններին (Ս. Պետրոսյան):

Ընդհանուր լեզվաբանության տարբեր թեմաներ ևս քննության նյութ դարձան գիտաժողովի ընթացքում ներկայացված զեկուցումներում, որոնցում քննվեցին քաղաքականությունը և հայերենը՝ Ջորջ Օրուել ընթերցելիս (Վ. Միրզոյան), մայրենիի ընկալումը վաղ և ուշ երկլեզվության պայմաններում (Դ. Մնացական յան): Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներին

անդրադարձավ Ֆ. Հակոբյանը, ժամանակակից ռազմագիտական հայերենի կատարելագործման ուղիներին՝ Ա. Խաչատրյանը։

Ժամանակակից հայերենի նորակազմ բառերի դասակարգման և իմաստակառուցվածքային վերլուծության հարցերին էր նվիրված Ա. Գալստյանի ելույթը։ Հետաքրքիր զեկուցումներ հնչեցին բժշկագիտական խոսքի առանձնահատկությունների (Տ. Աշչյան), հատուկ անվան բառիմաստի լեզվաբանական խնդրի շուրջ (Հ. Հարությունյան), տերմինների և նրանց համարժեք ձևերի գործածության (Ա. Բադոյան) վերաբերյալ։

Գիտաժողովի մասնակիցներն անդրադարձան նաև լեզվի կանոնարկման հարցերին. Ռ. Սաղաթելյանի ելույթը վերաբերում էր ֆիթնեսի տերմինների գործածությանը մարզական ակումբներում, դրանց հայերենացման խնդիրներին, Ա. Ավետիսյանինը՝ հայերեն բժշկական տերմինաբանության աղբյուրներին, հայերեն բժշկական բառապաշարի կանոնարկման խնդիրներին։ Արդի հայերենում գոյականի հոգնակիակազմության շեղումներն առանձնացրեց և կանոնարկման առաջարկներ արեց Վ.Խաչատրյանը, գովազդի լեզվին անդրադարձավ Վ. Շահրամանյանը։

Հետաքրքիր և ուսանելի զեկուցումներ հնչեցին նաև լեզվի ուսուցման վերաբերյալ. Ս. Մինասյանը ներկայացրեց վաղակատար ներկայով դրված բայաձևերի՝ *արդեն, դեռ* և *նոր* մակբայների հետ կիրառության ուսուցման առանձնահատկություններ։ Ներկայացվեց նաև ինֆոգրաֆիկայի դերը հայերենը որպես օտար լեզու սովորեցնելիս (Մ. Աթաբեկյան, Մ. Բաբայան), դասագիրքը որպես արդյունավետ ուսուցման նախապայման դիտարկեց Ի. Ասոյանը։ Լեհաստանի Հանրապետությունից զեկուցումով հանդես ե-

կավ Լ. Տշեցյակը՝ ներկայացնելով հայերենի հնչյունական համակարգի դասավանդման առանձնահատկությունները լեհերի շրջանում՝ Ա.Պիսովիչի «Հայերենի քերականություն» գրքի հիման վրա։

Հետաքրքիր էին արևմտահայերենի խնդրառության քերականական կարգին (Ա. Ֆիշենկճյան, Ս. Տիոյան), Ռուբեն Սևակի «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» երկում գործածված բժշկագիտական տերմիններին (Ա. Ղարիբյան, Մ. Մարդիյան, Լ. Լալայան), տրական հոլովի իմաստային դրսևորումներին (ըստ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի, Վ. Մուրադյան) վերաբերող զեկուցումները։

Գիտաժողովի ավարտին ամփոփիչ-գնահատող խոսքով և առաջարկություններով հանդես եկան Լ. Հովհաննիսյանը, Գ. Մխիթարյանը, Թ. Ասոյանը, Վ. Կատվալյանը։ Լ. Հովհաննիսյանը պատկերավոր օրինակով նկատեց, որ լեզվի հարցերով պիտի զբաղվեն միայն լեզվաբանները։ Գ. Մխիթարյանը կարևորեց գիտակրթական երեք հաստատությունների (ԳԱԱ ԼԻ, ԵՊԲՀ, ԳՊՀ) համատեղ աշխատանքի արդյունավետությունը գիտաժողովի կազնակերպման գործում։ Թ. Ասոյանն ընդգծեց գիտաժողովի՝ լայն աշխարհագրություն ընդգրկելու հանգամանքը։ Հ. Սուքիասյանը գիտաժողովը գնահատեց որպես Էդուարդ Աղայանին վայել միջոցառում։ Գիտաժողովում ընդունվեց որոշում այլ հաստատությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպել համատեղ կլոր սեղան-քննարկումներ բժշկագիտական, ռազմագիտական եզրույթների թարգմանության վերաբերյալ։

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց Վ. Կատվալյանը՝ մեկ անգամ ևս ընդգծելով գիտաժողովի հաջողված լինելը. Կարևորվեց այն, որ գիտաժողովը հնարավորություն տվեց նաև բա-

նավիճելու, ծնվեցին նոր, հայերենագիտության զարգացմանը միտված գաղափարներ։

Վարսիկ Ներսիսյան
բանասիրական գիտությունների թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Կատվալյան Վիկտոր, Ղարիբյան Ալինա - Ազգային լեզվամտածողության դրսևորման որոշ յուրահատկություններ «Սասնա ծռեր» էպոսում (անգլ.)..... 5

Միխիթարյան Գայանե - Աստվածաշնչի թարգմանության ազդեցությունը հայոց լեզվի պահպանման և զարգացման գործում(անգլ.)..... 13

Գևորգյան Գայանե- Սեբաստիա քաղաքի լեզվական յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը (անգլ.)..... 26

Խաչատրյան Հասմիկ- Համշենի բարբառի բառապաշարային առանձնահատկությունները (անգլ.)..... 35

Վարդանյան Արտակ -Հայ-իրանական լեզվական առնչությունները Ագուլիսի բարբառում և հայկական «զոկ» ցեղանվան ստուգաբանությունը (անգլ.)..... 50

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Վարդանյան Արտակ - Նախիջևանի բարբառային համապատկերը 65

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Զաքարյան Հովհաննես - «Ճեղք, խորշ» իմաստով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն .....…… 77

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

«Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյակին.... 99

Ներսիսյան Վարսիկ - «Հայոց լեզվի ուսումնասիրման և ուսուցման խնդիրներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին…….. 103

CONTENTS

ARTICLES

Katvalyan Viktor, Gharibyan Alina - Some Peculiarities of Manifestation of National Language Thinking in the Epic "Sasna Tsrer" (in Engl.)..... 5

Mkhitaryan Gayane - The Influence of Bible Translation in the Preservation and Development of the Armenian Language (in Engl.)..... 13

Gevorgyan Gayane - General Characteristics of the Language Features of the City of Sebastia (in Engl.)..... 26

Khachatryan Hasmik - Lexical Features of Hamshen Dialect (in Engl.)..... 35

Vardanyan Artak - Armenian-Iranian Languuage Correlations in the Agulis Dialect and Etymology of the Name of the Armenian Ethnic Group "Zok" (in Engl.)..... 50

REPORT

Vardanyan Artak - The Dialectal Overview of Nakhijevan..... 65

DISCUSSIONS

Zakaryan Hovhannes – Etymology of Several Armenian Words Meaning “Slit, Cavity”..... 77

SCIENTIFIC LIFE

International Conference "Fundamental Issues in the History of the Armenian Language" Dedicated to the 80th Anniversary of the Founding of the NAS of the RA..... 99

Nersisyan Varsik - International Conference "Problems of Studying and Teaching the Armenian Language" Dedicated to the 110th Anniversary of the Birth of Academician of the NAS of the RA Eduard Aghayan..... 103

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Катвалян Виктор, Гарибян Алина - Некоторые особенности проявления национального языкового мышления в эпосе "Сасна црер" (на англ. яз.)……..... 5

Мхитарян Гаяне - Влияние перевода Библии на сохранение и развитие армянского языка (на англ. яз.)..…… 13

Геворкян Гаяне - Общее описание языковых особенностей города Себастия (на англ. яз.).....…….. 26

Хачатрян Асмик- Лексические особенности амшенского диалекта (на англ. яз.)…….. 35

Варданян Артак - Армяно-иранские языковые корреляции в агулисском диалекте и этимология названия армянской этнической группы "зок" (на англ. яз.)……... ... 50

СООБЩЕНИЕ

Варданян Артак- Палитра диалектов Нахиджевана……. 65

ОБСУЖДЕНИЕ

Закарян Оганес- Этимология некоторых армянских слов, обозначающих “щель, каверна”……. 77

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Международная конференция "Фундаментальные вопросы истории армянского языка", посвященная 80-летию со дня основания НАН РА……... 99

Нерсисян Варсик -Международная конференция "Проблемы изучения и преподавания армянского языка", посвященная 110-летию со дня рождения академика НАН РА Эдуарда Агаяна….. 103

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

2 (20)

Շնավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի

Հանդեսի խմբագրությունը պատասխանատվություն չի կրում
հեղինակների տեսակետների, մոտեցումների համար։

Խմբագրության հասցեն՝ 0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15, հեռ. (010)565337
Address: Grigor Lusavorich str. 15, 0015, Yerevan, Armenia, tel. (010)565337
Адрес редакции: 0015, Ереван-15, ул. Григора Лусаворича 15, tel. (010)565337

Հանդեսի պաշտոնական կայքը՝ http://language.sci.am
Official site of the journal: http://language.sci.am
Официальный сайт журнала: http://language.sci.am

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ instlingv@sci.am, inslang@sci.am
E-mail of the jornal: instlingv@sci.am, inslang@sci.am
Электронная почта журнал: instlingv@sci.am, inslang@sci.am

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափսը՝ 60x84¹/₁₆ տպագրական մամուլ։
Տպաքանակը՝ 100 օրինակ։
Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։